

Հայկական գիտահետազոտական հանդույց Armenian Research & Academic Repository



Առևտ աշխատանքն արտանագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասուրյան 3.0» արտանագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենը և տարրելն եղուրը ցանկացած ձևաչափով կամ եղիչով
ձեռփոխել կամ օգտագործել առևտ եղուրը ստեղծելու համար եռը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

ԱՐԵՎԱԿԱՐԱՐ

Արևակարար.

59

31859

U-25 Անրդուսի. 6.
Արդիշամակը բարձր
604-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԵԼԻՅԱՆԿԵՐԻ ԽՈՐՀԻՔԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԵՊԵԱՆԻ ԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈՒՐ ՅԵՐԱՄԵՐԻ, ՄԻԱՅՆ Հ.

ՆԻԿ. ՍԱՐԳՍՅԱՆ

591.5

~~530~~

U-25

~~98-00~~

ԽՍՀՄ ԳԱՅՈՒՄ 1957 թ.

ԱՐՅԵՍԱՎՈՐՆԵՐԸ

ԶՐՈՒՅՑՑՆԵՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

A $\frac{1}{16159}$

1802
9656
ՏԵՐԵՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ - № 150.

ՅԵՐԵՎԱՆ - 1924.



Sperm 2500

Պետհրատի սուազին տպաբան Վաղարշակատում.

ԴԻԱԲՈՒՆԵՐԸ

Ահա մի մեռած մուկ, ընկած թփի սոտ. Նրա շուրջն անհանգիստ կերպով այս ու այն կողմն են գնում-գալիս մըջյուններ ու տեսակ-տեսակ փոքրիկ բզեզներ, իսկ վերել ոդի մեջ թրվոում են մեծ ու փոքր ճանճեր, վորոնք շուտ-շուտ նստում են նրա վրա, տնտղում նրա մարմինը և կրկին թռչելով՝ պտույտներ գործում ոդի մեջ։ Յեվ քանի գնում, այնքան այդտեղ վխտացող մըջյունների, ճանճերի ու բզեզների թիվը շատանում է։ Նրանք բոլորն ել գալիս են հեռվից.



Դիաթաղները թաղում են մզան դիակը
մի մեծ բգեղ և, թըը՝ մփ, իջնու
թաղանթաթևերը հավաքելով վել
մկան մարմնին։ Դա մի գեղեցիկ
ըլնջագույն, վրանյերկու հատ ձ
տերով, գլուխը մեծ՝ ուժեղ ծնոտ

մկան հոտը գրավում,
քաշում ե բոլորին դեպի
այդտեղ։ Մկան մարմնի
շուրջն առաջանում ե մի
յեռուն կյանք։

Բայց այդ ըոլորը
դեռ վոչինչ։ Մեկ ել
հանկարծ լսում ես մի
ուժեղ դուռոց։ Գալիս ե
գետնին և շտապ-շտապ
թևերիտակ՝ մոտենում ե
եղ ե։ Վերնաթևերը նա-
ումուռու գնացող սև շեր-
ով և կարծ ու ծայրերին

հաստացող բեխերով կամ բողկուկներով, կարճ վերնաթևերի պատճառով փորի ծայրը բաց և ապա հաստ ու ուժեղ վոտներով:

Փոքը ինչ անցած՝ լսվում ե մի նոր դռոց, գալիս ե յերկրորդ բզեզը, ապանույն ձեռվ գալիս են յերրորդը, չորրորդը... և բոլորն ել իջնելուց հետո շտապում են դեպի մկան մարմինը: Մոտենալով մկան մարմնին՝ նրանք կանգ են առնում, դիտում նրա դիրքը զանազան կողմերից և ապա մտնում նրա տակը: Մեկը մտնում ե գլխի տակը, մյուսը՝ փորի, յերրորդը՝ կրծքի, չորրորդը՝ պոչի: Շուտով մկան մարմինն սկսում ե յերերալ, շարժվել: Ինչպես յերեւմ ե, այդ բզեզները հենվելով իրենց ուժեղ վոտների վրա՝ բարձրացնում են նրա մարմինն իրենց տափակ մեջքերի վրա և այդպիսով շարժում նրան: Բայց նրանք շարունակ այնտեղ չեն մնում. քիչ անցած՝ մեկ-մեկ դուրս են գալիս, դիտում մկան մարմինը զանազան կողմերից, ապա մոտենալով՝ տընդում են նրա մազերը և կրկին մտնում իրենց տեղը: Պարզ ե, վոր նրանք այնտեղ ինչ վոր գործ են կատարում: Յեվ իրավ, ուշադրությամբ դիտելով՝ նկատում ենք, վոր մկան մարմնի շուրջը հողը հետզհետե բարձրանում ե, իսկ մուկը, ընդհակառակը, ցած ե իջնում: Նշանակում ե, նրանք քանդում են մկան տակ գտնվող հողը: Վորոշ ժամանակից հետո մուկը բոլորովին ցած ե իջնում և վերջն ել ծածկվում հողով: Դիտելով այդ՝ այն տպավորությունն ե ստացվում, թե մկան մարմինը խորասուզված ե հողի մեջ, ճիշտ այնպես, ինչպես ծանր իրերը խորասուզվում են ջրի մեջ:

Բայց ինչպես են կատարում նրանք այդ աշխատանքը: Այդպիսի աշխատանքի համար, հասկանալի յե, վոր պետք ե ունենալ մի շարք հարմարություններ, ամենից առաջ պետք ե ունենալ քանդելու գործիք, նման մոտավորապես մեր բահերին: Յեվ նրանք ունեն այդ հարմարությունները: Նախ և առաջ ունեն նրանք հաստ ու ուժեղ վոտներ և շնոր-

հիվ այդ վոտների յե, վոր կարողանում են պահել մկան մարմնի ամբողջ ծանրությունն իրենց մեջքերի վրա և շարժել այս ու այն կողմը։ Շարժելով մկան մարմինը այս ու այն կողմը՝ նրանք տալիս են նրան զանազանձև ու դիրք։ Այսպես, որինակ, այդ շարժումների միջոցով մկան մարմինն ընդունում ե ամենափոքր չափը և մտնում փոքրիկ անցքի միջով։ Այնուհետև յեթե դիտենք նրանց վոտները, կտեսնենք նրանց ծայրերին խսկական բահեր։ Այս բահերով նրանք հողը թե քանդում են և թե դուրս ածում։ Դուրս ածված հողը կամ ինքն իրեն և կամ հենց բղեղների վոտների շարժումներով ցած թափվելով՝ հետզհետե ծածկում ե իր տակ մկան մարմինը։ Այսպիսով շուտով մուկը թաղվում ե, և նրա վրա առաջանում ե մի փոքրիկ փափուկ ու ցածրիկ հողաթումբ։ Ի՞սկ կատարվեց, Մի թաղում, իհարկե։ Բայց ինչու։ Գուցե նրա համար, վոր մկան մարմինը չմնա գետնի յերեսին և իր գարշահոտությամբ ողը չապականի։ Անշուշտ վոչ։ Այդ բղեղները, վորոնց այժմ կարող ենք անվանել դիաթաղներ, թաղումից անպայման պետք ե վորևե ոգուտ ունենան։ Բայց ինչ։

Այս հարցին պատասխանելու համար, խոսք չկա, պետք ե սպասել միքանի որ և ապա քանդելով գերեզմանը՝ տեսնել, թե մկան մարմինն ինչ փոփոխությունների յե յենթարկվել այնտեղ և ապա ինչ են անում այնտեղ մեր դիաթաղները։ Այս փորձը շատերն են կատարել և միշտ ել նկատել են հետևյալը։ Հողի տակ մի խոռոչում ընկած ե մկան մարմինը։ Բայց բոլորովին մերկ վիճակում։ Դիաթաղներն, ուրեմն, փետտել են նրա բոլոր մազերը և փետտել են վոչ թե ուտելու համար, վոչ, փետտած մազերը բոլորը թափված են այնտեղ՝ խոռոչի հատակին։ Նշանակում ե՝ մկան մարմնից վոչինչ չի պակսել, ասել ե՝ մեր դիաթաղները վոչինչ չեն կերել։ Բայց ուր են դիաթաղները։ Դրանք ել այն-

տեղ են, մի անկյունում կուչ յեկած, բայց միայն յերկու հատ: Զարմանալին այն ե, վոր միշտ ել հողի տակ, խոռոշում գտնվում են միայն յերկու հատ դիաթաղ: Պարզ ե, վոր մյուս դիաթաղները, վորոնք մասնակցում եյին կենդանու թաղման աշխատանքներին, իրենց գործը վերջացնելուց հետո հեռացել են. և հեռացել են անշուշտ առանց վորեւ վարձատրության: Խչպես յերկում ե, նրանք գնացել են այլ մեռելներ թաղելու, մի տեղ մի սկյուռ, մի այլ տեղ՝ մի ոճ, մի յերբորդ տեղ ել՝ մի ծիտ, կաչաղակ կամ մի այլ թռչնակ: Բայց ովքեր են խոռոշում մնացողները:

Մի եգ և մի արու, ուրիշ կերպ ասած, մի մայր և մի հայր: Յեվ մայրը մկան մերկ մարմնի զանազան մասերում սկսում ե ձու ածել: Շուտով այդ ձվերից դուրս են գալիս փոքրիկ վորդեր, կամ թրթուռներ՝ սպիտակ ու կույր. դրանք հազիվ-հազ են շարժվում և կարիք ել չունեն արագ շարժումների: Ծնողները նրանց համար հոգացել են ամեն ինչ՝ թե առատ սնունդ և թե ապահով վայր: Յեվ իսկապես, ուր վոր շարժում են նրանք իրենց գլուխը, հանդիպում են առատ սննդի: Յեվ այդ հասկանալի յե միանգամայն. նրանք գտնվում են մկան մարմնի վրա և կերակրվում են հենց նրանով: Բացի դրանից, վոչ վոք նրանց հանգիստը չի խոռվում: Գետնի տակ, այնտեղ, վորտեղ նրանք են գտնվում, վոչ ճանճեր կան, վոչ մըջուններ և վոչ ել ուրիշ բղեզներ: Դրանք բոլորն ել հեռացել են հենց այն ժամանակ, յերբ դիաթաղներն սկսել են իրենց աշխատանքը: Ունենալով առատ սնունդ, թրթուռներն արագ կերպով աճում-մեծանում են: Յերկու շաբաթվա ընթացքում հասնում են նրանք իրենց կատարյալ հասունության: Դրանից հետո թողնում են նրանք մկան մարմինը, վորից այժմ մնացել են միայն վոսկորները, և դանդաղ կերպով շարժելով իրենց չաղլիկ մարմինը՝ փոքր ինչ հեռանում են և ծակում հողը, մտնում մեջը և շինելով

մի փոքրիկ բնիկ, կծկվում են այնտեղ։ Այժմ՝ նրանք այլս վոչ ուտում են և վոչ ել շարժվում։ Թվում ե, թե նրանք մեռած են և կամ հիվանդ։ Բայց վոչ։ Այդ դրության մեջ նրանք սկսում են յենթարկվել մի շարք փոփոխությունների։ Այսպես, որինակ, նրանց վրա առաջանում են յերկու զույգ թևեր, մի զույգը՝ նրանցից թաղանթաթևեր են՝ թռչելու համար են, իսկ մյուսը՝ վերնաթևեր՝ ուժեղ ու պինդ, վորոնցով ծածկում ու պաշտպանում են նրանք իրենց նուրբ թաղանթաթևերը։ Ապա յերեք զույգ վոտներ, մի զույգ բողկուկներ, աչքեր և այլն։ մի խոսքով, այն բոլորը, ինչ վոր ունեն բզեզները, Յեվ իսկապես, այդ փոփոխություններից հետո թրթուռները դառնում են կատարյալ բզեզներ։ Բզեզ դառնալուց հետո նրանք դուրս են գալիս հողի տակից և ուրախ ու անհոգ թռչում այս ու այն կողմ։ Բայց յերբ վրա յեն հասնում ձմռան ցրտերը, նրանք հողը ծակում են, ներս մտնում և ձմեռային քուն մտնում այնտեղ։ Գարնանային տաք որերին, ուրիշ բզեզների, ճանճերի և թրթուռների հետ նրանք ևս արթնանում են իրենց խոր քնից և դուրս գալիս հողի տակից։

Բայց այժմ նրանք այլևս այնպես անհոգ չեն, ինչպես աշնանն եյին։ Այժմ նրանք մեծ գործ ունեն անելու. պետք ե մտածել սերունդ առաջ բերելու մասին։ Իսկ դրա համար, ինչպես տեսանք արդեն, պետք ե ման գալ, մեռելներ գըտնել, թաղել այդ մեռելները և նրանց մարմնի մեջ ձվեր ածել։ Բավականին ծանր ու մեծ աշխատանք։ Բայց բզեզները կատարում են այդ աշխատանքը անտրտունջ կերպով։ Այդ աշխատանքի ժամանակ եգերին ոգնում են նաև արուները։ Յեվ այդ կողմից նրանք բոլորովին չեն նմանում ճանճերին, միջատներին կամ հենց մյուս տեսակի բզեզներից շատերին, վորոնց արուները նոր սերնդի մասին միանգամայն չեն մըտածում։ Այդ կողմից աչքի յեն ընկնում մանավանդ մեղու-

ների արուները, վորոնց անունը սերտ կերպով կապված ե
ծուլության ու ձրիակերության հետ:

Դիաթաղների մասին առաջները չատ ա-
ռասպելներ եյին պատմում: Այսպես, որինակ, ասում եյին,
յերբ մեռելի տակ քար ե լինում, այսպիսի բան, վոր քան-
դել չի կարելի, ապա դիաթաղները մեռելը քաշում, տանում
են մի հարմար տեղ և թաղում այնտեղ. կամ յեթե մեռելը
կախված ե լինում մի փայտից, այն ժամանակ դիաթաղ-
ները քանդելով փայտի հիմքը՝ վայր են գցում փայտը, նրա
հետ միասին և մեռելը և ապա թաղում վերջինս: Յեզ այլ
սրանց նման շատ ու շատ բաներ: Բայց վոր գլխավորն ե, այդ
առասպելները պատմում եյին գիտնականները, այսինքն նը-
րանք, վորոնք պարտավոր են ճիշտն ասելու. իսկ ինչ վերա-
բերում ե հաօարակ մարդկանց, նրանք արդեն ինչեր ասես,
վոր չեյին ասում ու պատմում դիաթաղների մասին: Այդ
պատմություններին նայած, դիաթաղները մտածում ու դա-
տում են այնպես, ինչպես մարդիկ, նույնիսկ շատ դեպ-
քերում ել ավելի խելոք են վարվում ու հնարագիտություն
ցույց տալիս, քան մարդիկ:

Սակայն ֆրանսիացի նշանավոր գիտնական Ֆարըը, վոր
իր յերկար կյանքն անց ե կացրել փոքրիկ մըջունների,
ճանճերի, բզեզների, սարդերի և այլ սրանց նման պատիկ
կենդանիների կյանքն ուսումնասիրելով՝ հաստատել ե, վոր
այդ բոլոր պատմությունները դիաթաղների մասին վոչ այլ
ինչ են, բայց յեթե հեքյաթներ: Այսպես, որինակ, Ֆարըը
բազմաթիվ փորձերով հաստատել ե, վոր յեթե մեռելի տակը
քար ե լինում, դիաթաղները այդ դեպքում ևս վարվում են
ճիշտ այնպես, ինչպես յեթե այդտեղ փափուկ հող լիներ, և
շարունակում են իրենց ապարդյուն աշխատանքն ամբողջ
ժամերով. ճիշտ ե, այդ աշխատանքի ժամանակ յերբեմն մե-
ռելն ընկնում ե և մի հարմար տեղ, բայց դա տեղի յե ու-

Նենում բոլորովին՝ պատահականորեն և վոչ թե նախագծված կերպով, վորովհետև պատահում են նաև դեպքեր, յերբ բոլորովին հակառակն ե կատարվում, այսինքն մեռելը հարմար տեղից ընկնում ե մի ավելի անհարմար տեղ: Կամ յերբ մեռելը կախված ե լինում փայտից և այնպես, վոր կպչում ե գետնին, դիաթաղներն սկսում են քանդել վոչ թե փայտի, այլ մեռելի տակի հողը: Այսպիսի դեպքերում ևս, յերբեմն պատահում ե, վոր փայտն ընկնում ե, բայց դա դարձյալ պատահականորեն ե տեղի ունենում: Նշանակում ե, դիաթաղների աշխատանքի ժամանակ խելք, հնարագիտություն, մտածողություն ու այլ սրանց նման բաներ բոլորովին դեր չեն կատարում: Նրանք աշխատում են միշտ միակերպ, առանց վորեւ ուշադրություն դարձնելու ժամանակի և հանգամանքների վրա, ուրիշ կերպ ասած նրանք աշխատում են բնազդորեն:

Մտածելով են կատարում իրենց աշխատանքը, թե առանց մտածողության, կամ բնազդաբար, այդ մի կողմ դընենք, դրանով դիաթաղները մեր աշքում չեն կարող ընկնել: Հենց այն, վոր նրանք այնքան մեծ հոգատարություն են ցույց տալիս դեպի իրենց նոր սերունդը, բավական ե, վոր մենք չարհամարհենք նրանց: Սակայն կա մի հանգամանք, վոր նրանց շնորհակալության արժանի յե դարձնում: Այդ այն ե, վոր նրանք գետնի յերեսը մաքրում են մեռելներից կամ դիակներից: Նրանք վարվում են ճիշտ այնպես, ինչպես, այսպես կոչվող սանիտարները, վորոնք գյուղերում կամ քաղաքներում հսկում են մաքրության վրա և յեթե նըկատում են այս ու այն տեղ ընկած դիակներ, որինակ, սատկած շուն, կատու, հավ և այլն, ապա իսկույն հեռացնել և կա՞ թաղել են տուիս, վորովհետև դիակները ընկած մն սլով՝ հետզհետե նեխվում են և սարսափելի գարշահոտություն տար ծում իրենց շուրջը: Հաճախ այդպիսի դիակ-

ների պատճառով առաջանում են տեսակ-տեսակ հիվանդություններ, վորոնք բազմաթիվ զոհեր են տանում:

Բնության մեջ ևս կան այդպիսի սանիտարներ և դրանց թիվը բավականին շատ ե: Այդպիսի սանիտարներ են՝ արջ, բորենին, տեսակ-տեսակ գիշատիչ թռչուններն, որինակ, անգղները, ագռավները և այլն: Դրանք բոլորը դիակների հոտն զգալով՝ զալիս են յերեմն ամենահեռու տեղերից և ուտելով՝ մաքրում են գետնի յերեսը: Ահա այդ սանիտարների կողքին մի համեստ, բայց և կարևոր տեղ են բռնում մեր գի սթաղները: Յերբ դիակներն աննկատ են մնում մեծ սանիտարներից, այն ժամանակ սանիտարական գործն ամբողջովին ծանրանում ե դիաթաղների վրա և սրանք կատարում են այդ գործը մեծ յեռանդով ու ճարպիկությամբ:

Այս փոքրիկ, բայց և ոգտակար սանիտարներով հարուստ ե և մեր յերկիրը: Մեզ մոտ նարնջագույն վերնաթևեր ունեցողների կողքին պատահում են նաև բոլորովին սև վերնաթևեր ունեցողներ ել, մի բան, վոր մինչև այժմ այլ յերկը լուսներում դեռևս չի տեսնված:

Այսուհետեւ, յերբ դաշտերում, մարգագետիններում և կամ անտառներում զբոսնելու ժամանակ հանդիպեք փոքրիկ կենդանիների դիակների, ապա առանձին ուշադրություն դարձրեք նրանց վրա, վորովհետեւ շատ հավանական ե, վոր նրանց տակ տեսնեք այդ փոքրիկ սանիտարներին:

ԴԵՐՁԱԿՆԵՐԸ

Կար ժամանակ, յերբ մարդ չգիտեր, թե ինչ ըան ե ասեղն ու թելը և կամ կարած շորը։ Խիստ ցըտերից պաշտպանվելու համար նա շատ-շատ մի կենդանու մորթի յեր գըցում վրան կամ փաթաթվում մեջը։ Բայց այդ մորթին պաշտպանում եր նրա մարմի միայն մի յերեսը, մեջքը։ Թե առջեկի մասն ինչպես պիտի պաշտպաներ, այդ դեռ չըգիտեր։ Բավական ժամանակ անցած, նա հնարը գտնում ե. վերցնում ե յերկու մորթի, մեկը գցում ե մեջքի վրա, մյուսը՝ կրծքին և կապում նրանց ծայրերը միմյանց հետ թե վերևում և թե ներքեռում։ Յեվ դա շատ մեծ գյուտ եր այն ժամանակվա մարդու համար։

Այդպես եյին ապրում մեր հեռավոր պապերը։ Այդպես ե ապրում այսոր ել վայրենի մարդկանց մի մասը։ Կարի մասին, ուրեմն, դեռ վոչ մի հասկացողություն։

Սակայն այն, ինչ վոր մարդիկ չգիտեյին և կամ չգիտեն նույնիսկ այսոր վորոշ տեղերում, գիտեյին միքանի տեսակի թռչուններ, վորոնք հազարավոր տարիներ շարունակ դերձակությամբ են պարապել և դեռ պարապում են այսոր։ Այդ թռչունները կոչվում են դերձակներ։ Մի վերին աստիճանի հարմար անուն։

Դերձակներն ապրում են հեռավոր Հնդկաստանում, Զինաստանում և նրանց մոտ գտնվող յերկրներում և միշտ

այնպիսի տեղերում, ուր ծառեր կան: Դրանք փոքրիկ թըռչուններ են, գեղեցիկ գույնզգույն փետուրներով, ապրում են զույգերով կամ փոքրիկ ընտանիքներով և կերակրվում են մըջյուններով, միջատներով, թրթուռներով: Մարդկանցից հեռու չեն փախչում, հաճախ բնակություն են հաստատում մարդկանց տների մոտ, այդիներում: Աշխույժ և ժիր թըռչուններ են դերձակները. նրանց կարելի յե տեսնել շարունակ գետնի կամ ծառերի վրա մի տեղից մյուսը ցատկելիս:

Բայց տեսնենք, թե նրանք ինչպես են կաշում: Յերբ պետք ե ձվեր ածել, դերձակներն սկսում են բներ շինել կամ, ավելի լավ ե ասել, բներ կարել: Յեվ այդ ահա թե ինչպես: Գտնում են մի միջահասակ ծառ և ընտրում են նրա ներքեաի ճյուղերի վրա մի մեծ, փարթամ տերեւ և հենց այդ տերեաից ել կարում են իրենց բունը: Կտուցի և յերկար ու ուժեղ վոտների միջոցով տերեաի յեզրերը մոտեցնում են իրար այնպես, վոր տերեաից ստացվում ե մի ձագար և ապա սկսում են կարել նրա յեզրերը միմյանց հետ: Դրա համար նրանք տերեաի յեզրերի վրա կտուցով շինում են նախ փոքրիկ անցքեր: Հետո թել են գտնում և սրա մի ծայրը անց կացնում տերեաի ներքեաի անցքերից մեկի միջով: Վորպեսզի այս թելն անցքից կրկին դուրս չգա, նրա ծայրին հանգույց են շինում: Այնուհետև թելի մյուս ծայրն անց են կացնում տերեաի մյուս յեզրի ներքեաի անցքով: Յեթե թելը կարճ ե, ապա հենց այդտեղ ել հանգույց են շինում: Դրանից հետո վերցնում են մի նոր թել և ճիշտ նույն ձեռվ սկսած կարը շարունակում: Այդպես կարը հասցնում են մինչև տերեաի ծայրը: Բնի պատերը պատրաստ են արդեն. Յեթե մի տերեաից հնարավոր չի բուն շինել, այն ժամանակ մոտեցնում են յերկու տերեւ և նրանց յեզրերը կարում միմյանց հետ: Յերբեմն ել կարում են միմյանց հետ յերեք հատ տերեւ: Յեվ այդ ահա թե ինչու: Տերեւն իր սնունդն ստանում ե կո-

Թի միջոցով. յեթե այդ կոթը վնասվի, ուրեմն, տերևն այլևս
չի կարող սնունդ ստանալ. իսկ սրա հետեւանքն այն կլինի,
վոր տերևը կսկսի թառամել, չորանալ: Կչորանա նաև կոթը
և մի գեղեցիկ որ կպոկվի ճյուղից և տերևը դերձակի ընի



Դերձակն ու իր կարած բունք

հետ միասին կընկնի գետնին: Կա մի ուրիշ պատճառ ևս:
Յերբ տերևն անվնաս ե մնում, պահպանում ե իր կանաչ
գույնը: Իսկ դա մեծ նշանակություն ունի: ԶԵ վոր այդ
ժամանակ ընի պատերը կաղմող տերևն իր գույնով չի զա-

նազանվի սովորական տերևներից, ուրեմն և աննկատելի կմնա
թշնամիների աչքից:

Յերբ բունը պատրաստ ե, դերձակը նրա մեջ ձվերի և
ձագուկների համար շինում ե փափուկ տեղ: Դրա համար
նա այս ու-այն կողմն ե ընկնում և հավաքում, բերում զա-
նազան տեսակ փափուկ իրեր. այսպես, որինակ, կենդանինե-
րի բրդից պոկված մազիկներ, թռչունների փափլիկ փետուր-
ներ, ծառերի վրա գտնված թեթև ու քնքուշ մազմզուկներ
և այլն: Դրանից հետո դերձակը ձու յե ածում և թուխս
նստում: Վորոշ ժամանակից հետո ձվերից դուրս են գալիս
փոքրիկ ձագուկներ: Մայրը, նույնպես և հայրը նրանց սկը-
սում են կերակրել մեծ խնամքով. սկզբում միայն քնքուշ
ու փափլիկ թրթուռներով, իսկ հետո արդեն զանազան տե-
սակի միջատներով: Զագուկները շուտով միանում են, բնա-
վորվում և դուրս գալիս իրենց բնից: Յերբ ձու ածելու ժա-
մանակը գալիս ե, նրանք իրենց մոր պես սկսում են բուն
շինել: Յեկ վարպետության կողմից նրանցից վոչ մեկը յետ
չի մնում մորից, թեպետ վոչ վոք նրանց կարել չի սովո-
րեցըել: Ավելին, նրանցից և վոչ մեկը չի յել տեսել, թե դեր-
ձակներն ինչպես են կարում: Այդպես, ուրեմն, նրանք վար-
պետներ են ի ծնե, ի բնե:

Այժմ տեսնենք, թե դերձակները վորտեղից են գտնում
իրենց բնի համար հարկավոր թելը: Խոտերի և զանազան
բույսերի տերևների կամ ցողունների մեջ լինում են թելիկ-
ներ ու ջղեր: Ահա դերձակներն ոգտվում են հենց դրանցից:
Նրանք իրենց սուր կտուցով ճեղքում են տերևն ու ցողունը
և նրանց միջից դուրս քաշում թելը կամ ջիղը: Յերբեմն ել
բամբականման նյութերից դերձակները կտուցի և վոտնե-
րի միջոցով իրենք են թել հյուսում: Ճեշտ ե, այդ թելը
գեղեցիկ տեսք չի ունենում, բայց տեսքն այդտեղ առանձին
նշանակություն չունի. հարկավոր ե, վոր նա ունենա վորոշ

ամրություն։ Յեվ նա ունի այդ ամրությունը, բացի դրանից, նա սեփական աշխատանքի արդյունք եւ և հենց դրահամար ել գնահատելի յեւ Յեթե դերձակներն այս ու այն տեղ ընկած թոկի կտորներ են գտնում, նրանցից ել են թել դուրս քաշում և բանեցնում։ Շատ անգամ դերձակների բըների մեջ գտել են նաև բամբակի թելեր։ Այդ թելերը դերձակները հանել են զանազան փալասներից, վոր մարդիկ իրեւ անպետք նյութեր դուրս են նետել։

Այս բոլորը ցույց են տալիս, վոր դերձակների համար բոլորովին միենույն ե, թե թելը վորտեղից եւ և ինչ նյութից եւ շինված։ բավական ե, վոր նա ամուր լինի, ուրիշ վոշինչ։

Դերձակներն իրենց կտցով և վոտներով շատ վարժ ու վարպետ կերպով կարողանում են թելը շարժել այս ու այն կողմը։ Պատմում են, վոր մի ճանապարհորդ ցանկանալով վողջ-վողջ ըռնել դերձակին՝ թելերից մի ողակ ե շինում և կախում նրա ընի վրա։ Դերձակը վերադառնալով՝ նկատում ե ողակը. վերջինս նրան անհանգստացնում ե, և նա սկսում ե կտուցով քանդել ողակի հանգույցը։ Քիչ անցած՝ ողակի թելը բացվում ե։ Այնուհետև դերձակը բաց ե անում ամբողջ թելը և դեն գցում։

Դերձակները տեսակներ շատ ունեն։ Կան տեսակներ, վորոնց մարիներն են միայն դերձակությամբ պարապում, արուներն այդ արհեստը չգիտեն։ Նշանակում ե, այդ տեսակների մեջ կան միայն դերձակուհիներ, բայց վոչ դերձակներ։ Սակայն կան տեսակներ ել, վորոնց բունը շինում են գըլխավորապես արուները։ Այդտեղ ել, ուրեմն, գործ կատարողները դերձակներ են։ Յերբ ձու ածելու ժամանակը գալիս ե, դերձակն սկսում է բռն կարել և հենց վոր ընի ներքեմի մասը կարում եւ և մեջը փափուկ տեղ շինում, մարին այնտեղ ձու յեւ ածում և թուխս նստում։ Այնուհետև դերձակը շա-

բունակում եւ իր գործը։ Շատ անգամ պատահում եւ, վոր կարը վերջացնելու ժամանակ ձվերից դուրս են գալիս ձագուկները։ Դերձակների այս տեսակներն արդեն ապրում են վոչ թե Հնդկաստանում ու Չինաստանում, այլ Յեվրոպայում և Աֆրիկայում։

Կասկած չկա, վոր աշխարհում առաջին դերձակները կամ կար անողները յեղել են հենց այդ թոշունները։ Յեվ ով գիտե, գուցե մարդիկ հենց դրանցից են սովորել դերձակությունը։ Յեթե այդպես եւ, ուրեմն կարող ենք ասել, վոր աշակերտները շատ են առաջ անցել իրենց ուսուցիչներից։ Յեվ իսկապես, մինչդեռ վերջիններս այսոր ել դեռ շարունակում են կարել իրենց հին ձեռվ, մարդիկ հնարել են արդեն կարի զանազան տեսակներ, յեղանակներ, գործիքներ և մեքենաներ։ Այդպես եւ աշխարհը. մեկը տալիս ե միտքը, գաղափարը, իսկ մյուսը զարգացնում ե ու կատարելագործում։



ԶԵՎՈՂՆԵՐԸ

Շոր պատրաստելու ժամանակ նախ և առաջ ձեռում են և ապա կարում, և հայտնի յե ամենքին, վոր ձեւն ավելի դժվար գործ ե, քան կարելը Յեվ իրոք, ով վոր գիտե ասեղ բանեցնել, նա կարող ե և կարել, չենք ասում լավ, բայց այնքան, վոր կարելի յե տանելի համարել։ Այդպես չե ձեւվելը։ Զե անելու համար հարկավոր ե յերկար ժամանակ սովորել։ Յեվ իզուր չե, վոր դերձակների արհեստանոցներում ամենալավ վարպետներն են միայն ձե անում։ Զեն ահագին նշանակություն ունի։ Վատ ձեած շորն ինչքան ել լավ կարելու լինես, միևնույն ե, անշնորհք բան պետք ե լինի։ Զեվելու համար վարպետներն ունեն մի շարք գործիքներ, որինակ, սանտիմետր, կամ մի այլ չափ, մկրատ, քանոն, կարկին և այլն։ Առանց այս գործիքների ամենալավ ձե անող վարպետն անգան չի կարող վոչինչ անել։ Սակայն կան մի շարք միջատներ, վորոնք հրաշալի ձե են անում, այն ևս առանց վորեն գործիքի, նույնիսկ առանց մկրատի։

Այդ ձե անող միջատները կոչվում են ձեռղներ. սրանց մեջ ամենանշանավոր տեղը բռնում ե տերե-կտրիչ մեղուն։

Տեսնենք, թե նա ինչու համար ե ձե անում. Սովորական մեղուները, ինչպես զիտենք, խորիսին են պատրաստում, վոր բաղկացած ե լինում վեցանկյունի բջիջներից։ Այդ բջիջների մեջ մայր մեղուն ձվեր ե ածում, վորոնցից գուրս են գալիս փոքրիկ թրթուռներ։ Մեղուներն այդ փոքրիկ թրթուռներին կերակրելու համար բջիջների մէջ ածում են թե մեղը և թե ծաղկախոշի և թրթուռներն ազահորեն կերակրվելով այդ նյութերով՝ արագ կերպով աճում, մեծանում են։ Զեղող մեղուն չգիտե խորիսին պատրաստել, բայց նրա թըր-

թուռներն ևս կերակրվում են մեղրով. նշանակում ե, մեղրի համար պետք ե նա խորիսխի նման վորես բան պատրաստի: Յեվ նա տերեկի փոքրիկ կտորներից պատրաստում ե մատնոցի նման փոքրիկ անոթներ: Ահա հենց այդ անոթները պատ-



Հեղողներն ու հողի մնջ շինած նրանց մատնոցաճավ թշխները փոքրելու և վոչ ել ծառի բունը ծակելու, դրա համար ել ստիպված ե բա-

րաստելու համար ե նա ձե անում: Նա կտրտում ե տերեներից տարբեր մեծության ձըվաձև և կլոր կտորներ և այդ կտորները շարում իրար կողքի այնպես, վոր ստացվում են գեղեցիկքնիկներ: Այս բընիկները շինում ե նա կամ հողի մեջ և կամ ծառերի բների մեջ: Սակայն նա վոչ մի հարմարություն չունի վոչ հողը

վականանալու պատրաստի անցքերով։ Այսպիսի անցքեր շատ
կան թե հողի և թե ծառերի բնի մեջ, հարկավոր ե միայն
փորոնել։ Հողի մեջ անցքեր են փորում կարմիր անձրևորդ-
ները, վորոնք սովորաբար անձրևներից հետո դուրս են գա-
լիս գետնի յերեսը, իսկ ծառի մեջ՝ այն միջատները, վորոնք
կերակրվում են փայտանյութով։ Ահա ձեռդները գտնում են հենց
դրանց շինած անցքերը, բայց կան և այնպիսի ձեռդներ, վորոնք
իրենց բնիկները պատրաստում են պատերի մեջ յեղած փոք-
րիկ ու նեղլիկ անցքերի մեջ։ Անցքը գտնելուց հետո ձեռդ
մեղուն անմիջապես գործի յե անցնում։ Ամենից առաջ նա
փակում ե անցքի ներքեի ծայրը։ Դրա համար ևս նա կտըր-
տում ե տերևներից փոքրիկ կտորներ։ Սակայն այս կտոր-
ները վորոշ ձեւ ու մեծություն չեն ունենում։ Յեվ կարիք
ել չկա, վոր դրանք վորոշ ձեւ ու մեծություն ունենան. չե-
վոր միակ նպատակն այդտեղ այն ե, վոր անցքը փակվի։
Անցքն ամուր փակելուց հետո ձեռդ մեղուն սկսում ե շինել
բնիկը։ Այս բնիկի համար արդեն կտրտում ե նա տերևներից
ձվածե կտորներ, բայց բոլորն ել միևնույն մեծության։ Կը-
տորները շարում ե իրար իողք-կողքի այնպես, վոր մեկի յեզ-
րը ծածկի մյուսի յեզրը. այդ ձեռվ անցքի ներսում ա-
ռաջ ե բերում նա մի գլան։ Այնուհետև կտորների ներքեի
ծայրերն ուղղում են և շինում բնիկի հատակը։

Այժմ պետք ե բնիկի ներսը պատել նման կտորների մի
նոր շերտով ևս, վորովհետև կտորները մի շերտի մեջ
հեշտությամբ կարող են մեկը մյուսից հեռանալ և, բացի
դրանից, մեղրը կարող ե նրանց արանքով դուրս ծորել, թե-
պետ մեղուն ամեն կերպ աշխատել ե կտորները շարել այն-
պես, վոր նրանց արանքում բաց տարածություն չննա։ Այս
յերկրորդ նոր շերտը ևս շինում ե նա ձվածե կտորներից,
բայց այս կտորներն ավելի փոքր են լինում, քան առաջին
շերտի կտորները։ Յեվ այդ միանգամայն հասկանալի յե. չե-

վոր առաջին շերտը շինելուց հետո անցքն ավելի նեղացել է և մեծ կտորներն այդտեղ այլևս չեն կարող տեղափորվել։ Այդ շերտը շինելուց հետո բնիկն արդեն պատրաստ է։ Այնուհետև մեղուն լցնում ե բնիկը մեղրով և մեջը մի հատ ձռւ ածում։ Այժմ պիտի բնիկը կամ, ավելի ճիշտ ասած, մատնոցաձև բջիջը ծածկել։ Այդ ծածկը ևս նա շինում ե տերևների կտորներից։ Բայց ծածկի համար նա կտրտում է վոչ թե ձվաձև, այլ կլոր կտորներ։ Կտրելով 4, 5, յերբեմն ել մինչև տասը հատ կլոր կտորներ, դնում ե նա մատնոցաձև բջիջի բերանում և պինդ ճնշում։ Ճնշման տակ նրանք ամուր կերպով նստում են իրար վրա և լավ ծածկում բջիջի բերանը։ Սովորաբար այդ խուփը փոքր ինչ վերևի կողմից փոս ընկած ե լինում, սակայն փոս լինելով՝ յերբեք նա չի կողչում մեղրին։ Յեվ այդ ահա թե ինչու։ Ինչպես տեսանք, բջիջը պատրաստում ե նա յերկու շարք կտորներից և ներսի շարքը շինում ե ավելի փոքր կտորներից, քան դրսինը. դրա համար ել ներսի շարքի կտորների ծայրերն ավելի ցածր են, քան դրսի կտորներինը և յերբ բջիջի բերանին դրած կլոր տերևները ճնշում ե մեղուն, այդ կտորները գնում դեմ են ընկնում ներսի շարքի կտորների ծայրերին և այլևս առաջ չեն գնում։ Այդպիսով բջիջի բերանը ծածկվում ե մի ամուր խցանով։ Այժմ բջիջի մեջ գտնվող ձվիկից դուրս յեկող թըրթունն արդեն ամեն կողմից ապահովված է. նա դրսից պաշտպանված է բջիջի պատերով և, բացի դրանից, ունի առատ սնունդ։ Ուտելով այդ սնունդը՝ առատ կերպով աճում մեծանում ե բջիջի մեջ և կատարյալ հասունության հասնելուց հետո հարսնյակ ե դառնում և ապա կերպարանափոխվելով՝ մեղու դարձած դուրս ե գալիս։

Սակայն ձևող մեղուն մի հատ բջիջ պատրաստելով չի բավականանում. նա պատրաստում ե սովորաբար 6-7 նման բջիջներ. կան և այնպիսիները, վորոնք պատրաստում են 17

-18 հատ բջիջներ։ Հարց ե առաջանում՝ ինչքան կտոր պետք ե ձեմ մեր մեղուն այդքան բջիջներ պատրաստելու համար։ Մի գիտնական կատարել ե այդ հաշվվը։ Նա վերցրել ե յերկու հատ բջիջ և քանդելով նրա բոլոր մասերը՝ գտել ե, վոր նըրանք բաղկացած են 83 կտորներից, վորոնցից 65 հատը ձըվաձե, 18-ը կլոր։ Նշանակում ե, յեթե մեղուն պատրաստի 18 բջիջ, պետք ե գործածի այդ հաշվով մոտ 700 կտոր։ Բայց բացի բջիջներ պատրաստելուց, մեղուն, ինչպես տեսանք, ծածկում ե նաև անցքին ներքին ծայրը, ուրեմն դրա համար ևս անհրաժեշտ են տերևների կտորներ։ Նույն գիտնականը հաշվել ե, վոր այդ նպատակի համար մեղուն պետք ե գործ ածի մոտավորապես 300 կտոր։ Ասել ե, ձեռդ մեղուն բջիջներ շինելու համար գործ ե ածում ընդհանուր առմամբ մոտ 1000 կտոր։

Շատ հեշտ ե ասել հազար կտոր, բայց պետք ե իմանալ, վոր ամեն մի կտոր կապված ե ահազին աշխատանքի հետ։ Յեվ պետք ե իմանալ նաև, վոր մեղուն այդ աշխատանքը կատարելու համար ուրիշ բան չունի, բացի ծնոտները։

Արագ ու ճարպիկ կերպով են աշխատում նրա ծնոտները և ցանկալի կտորը պատրաստվում ե շատ շուտով, սակայն կամի հանգամանք, վոր ամենքին զարմանք ե պատճառում։ այդ այն ե, վոր կտորներից յուրաքանչյուրն ունենում ե վորոշ ձեւ և մեծություն, Ուրեմն, ամեն մի կտոր կտրելիս պետք ե մեղուն ուշագրություն դարձներ և կտորի ձեմ ու մեծության վրա։ Նրա կտրած կլոր կտորները վոչ մի պակասություն չունեն, կարծես կարկինով չափած, ձեած լինեն։ Կանոնավոր կլորություն ունենալուց զատ, այդ կտորները բոլորն ել ունեն նույն մեծությունը։ Յեթե ձեզ պատվիրեն թղթից կլոր կտորներ կտրել և տան ձեզ դրա համար միայն մկրատ, պարզ ե, վոր հազիվ թե կարողանաք պատվերը ճշշտությամբ կատարել։ ձեր կտրած կլոր կտորները կունենան

անպայման այս ու այն ծուռումուռ մասերը։ Բացի դոանից, կտորներից մեկը մեծ կլինի, մյուսը փոքր։ Հավասար կլորներ կտրելու համար կպահանջեք անշուշտ դուք կարկին։ Բայց տեսեք, վոր մեղուն առանց կարկինի, նույնպես և առանց մկրատի - կտրում ե միանգամայն կլոր և իրար հավասար կտորներ։

Նրա կտրած կլոր կտորներն ունեն ճիշտ անցքի բերանի մեծությունը։ Յեթե ձեզ ցույց տան մի կճուճ և ապա վերջինս հեռացնելուց հետո ասեն, թե կտրեցեք խավարտից նրա բերանի համար մի կափարիչ, բայց այնպես, վոր նա ուղիղ կճուճի բերանի չափ լինի, դուք անկասկած շատ կդժվարանաք, և ձեր կտրած կափարիչը կկուճի բերանի համեմատությամբ կամ մեծ կլինի կամ փոքր, մինչդեռ մեր մեղուն բջիջի բերանը ծածկելու համար կտրում ե միանգամայն համապատասխան մեծություն ունեցող կտորներ։ Յեվ վոր գլխավորն յե, այդ աշխատանքը կատարում ե նա առանց բջիջի բերանը տեսնելու։ Ինչպես, կհարցնեք դուք։ — Շատ պարզ կերպով։ Նա իր բջիջները շինում ե կամ հողի մեջ, կամ պատի ճեղքերում ե կամ կեղևի տակ։ մի խոսքով, այնպիսի տեղերում, ուր արեի ճառագայթներ չեն թափանցում, ասել ե, ուր կատարելապես մութ ե։ հասկանալի յե, վոր այդ մթության մեջ նա վոչինչ չի կարող տեսնել։ Բայց ինչպես վոր նա մկրատի և կարկինի կարիք չի զգում, այնպես և կարիք չունի անցքի բերանը լավ զննելու։ Առանց դրան եք մեր վարպետը ձեռւմ ե հարմար կտորներ։

Յեվ այդ աշխատանքը կատարում ե նա արագությամբ ու առանց յերկար ու բարակ մտածելու։ Յեվ մտածելու համար նա բնավ ժամանակ ել չունի։ Զե՞ վոր պետք ե հարյուրավոր այսպիսի կտորներ կտրի, ապա տեղափոխի այդ կտորները անցքը, այնտեղ նրանց նպատակահարմար կերպով դասավորի։ Հաճախ կտորները կտրում ե նա միքանի հա-

Ռյոււր քայլ հեռավորության վրա, ուրեմն, ինչքան պետք ենա դես ու դեն գնա: Ճիշտ ե, նա թևեր ունի, բայց թռչելն ել աշխատանք ե պահանջում:

Այդ դեռ բավական չե. բջիջները շինելուց հետո պետք ել լցնի նրանց մեղրով, վոր նույնպես մի ծանր աշխատանք ե: Մեղրը հավաքում են նա ծաղիկներից. ամեն մի ծաղկի մեջ գտնվում է չնչին քանակությամբ մեղրահյութ: Այդ մեղրահյութը ծծում ենա և ապա արագ կերպով տանում և թափում շինած բջիջների մեջ: Վերջիններս լցնելու համար միայն հարյուրավոր ու հազարավոր անգամ այցելում ե ծաղիկները և կրկին վերադառնում:

Յեկ այդ բոլորը կատարում են մեղուն իր կարճատեկյանքում, վոր տեսում են ընդամենը միքանի շաբաթ:


Յեթե գուք այսուհետեւ վարդի, յասամանի կամ շեփորուկի և կամ այլ թփի ու ծառի տերևների վրա տեսնեք կլոր ու ձվաձև կտրվածքներ, իմացած յեղեք, վոր դրանք բոլորը մեր ժրաշան ձևողների ծնոտների արդյունքն են:

ԶՈՒԼՇԱԿՆԵՐԸ

Մի ճանապարհորդ լճակի մոտ նստած ժամանակ նկատում ե մի չափազանց զարմանալի յերևույթ—ավագով ծածկը վածդղետնի վրա հանկարծ բացվում ե մի փոքրիկ դռնակ և տակից դուրս ե գալիս մի բավական մեծ սարդ և վերջինս դուրս ե գալիս թե չե, դռնակն ինքն իրեն նորից փակվում ե: Ճանապարհորդը զարմացած տեղից վեր ե կենում և ուզում ե բռնել գետնի տակից այդպես խորհրդավոր կերպով դուրս յեկող սարդին: Սակայն սարդը նկատելով ճանապարհորդի շարժումը՝ իսկույն յետ ե դառնում և վոտիկներով բանալով դռնակը՝ թագնվում ե բնի մեջ: Սարդի այդքայլն ել ավելի յե զարմացնում ճանապարհորդին և սա վըճռում ե անպատճառ բռնել նըան: Մոտենում ե բնին և ըսկըսում ե վորոնել դռնակը: Վոչինչ չի յերևում: Յերկար վորոնելուց հետո վերջապես գտնում ե դռնակը. հանում ե դանակը և ցանկանում ե նըա սուր բերանով դռնակը բարձրացնել: Փոքր ինչ բարձրացնելուց հետո դանակը դուրս ե պըծնում, և դռնակը զսպանակավոր դռան նման նորից փակվում ե ինքն իրեն: Ճանապարհորդի զարմանքն ել ավելի յե մեծանում և վախենալով, վոր դանակով կարող ե վնասել գուտակը, մի կողմն ե դնում դանակը և սկսում ե բռնը փորել կողքից: Շուտով բացվում ե բնի մի կողմը: Սարդը սարսափահար յեղած՝ բարձրանում ե բնի վերևի մասը և կըպ-

Հում այնտեղ դոնակին։ Այժմ ճանապարհորդը նորից դիմում է դանակի ոգնության։ սրանով նա նորից աշխատում է դոնակը բանալ, բայց այդ նրան չի հաջողվում, վորովհետեւ դոնակը կարծես միանգամայն ամուր կերպով միացել եր բնի պատերին։ Այդ ժամանակ հանում է նա դրիչը և սրա ծայրի սուր մասով աշխատում վերևից դոնակը բանալ, իսկ ներքեմից ել սկսում է դանակով բռնը կեսից կտրել։ Սարդը

տեսնելով, վոր այլնս բնի մեջ չի կարող թագնըվել, անմիջապես թողնում է բռնը և փախշում։ Ճանապարհորդն ել հենց դրան եր սպասում. իսկույն բռնում է նրան և զցում իր արկըդի մեջ, վորի վերևի յերեսի վրա կային ողափոխության համար բազմաթիվ մանրիկ ծակոտիներ։



Սարդի բռնը, վորի մի կողմը բացված և

Սարդը բռնելուց հետո ճանապարհորդն սկսում է ծանոթանալ նրա բնի հետ։ Դա մի անցք եր, կլոր բացվածքով և մոտ մի քառորդ արշին յերկարությամբ։ Բայց հետաքըրքը բականան այդ անցքը չեր, այլ նրա պատերը և մանավանդ դոնակը։

Անցքի պատերը ծածկված եյին հաստ պաստառով։ Այս պաստառը բաղկացած եր մի ամուր գործվածքից, վոր հյուսում է ինքը սարդը։ Հայտնի յե, վոր սարդերն իրենց մարմնի յետնի մասում, փորի ծայրին, ունեն փոքրիկ գեղձեր, վորոնցից դուրս ե գալիս մի հեղուկ, վոր ողի մեջ անմիջապես պնդանում, թել ե դառնում։ Մեզ մոտ ապրող սարդերը հենց

այդ թելից են հյուսում իրենց վոստայնը։ Ահա այդ թելից
ե հյուսում և մեր սարդն իր բնի պաստառը։ Այս պաստառը
գործելու համար նա անթիվ, անհամար պտույտներ ե գոր-
ծում բնի մեջ, վերսից ներքև և աջից ձախութեան թելերն անց
ե կացնում իրար շատ մոտիկ, ճիշտ այնպես, ինչպես ջուլ-
հակներն են անում գործվածքներ պատրաստելու ժամանակ։
Վորպեսզի այդ գործվածքը հարկավոր ամրությունն ունենա-
և պաշտպանի բունը զանազան վտանգներից, որինակ, փրւ-
վածքներից, ջրից և այլն, նա մի շերտով չի բավականանում
և շինում ե յերկրորդ, յերրորդ շերտը. վերջն ստացվում ե
մի բավական հաստ և ամուր գործվածք, վոր պաստառի
ձևով պատռմ ե բնի պատերը։ Այդ գործվածքի հողին
դարձած յերեսը կոշտ ե, անհարթ և դեղնավուն, իսկ ներսի
յերեսը՝ կոկիկ, հարթ, քնքույշ և միանգամայն սպիտակ։
Յեզ այդ հասկանալի յե. չե՞ վոր նրա վրայով պետք ե սար-
դը վեր ու վար անի բնի մեջ, մինչդեռ դրսի յերեսը պետք ե
կոշտ լինի, վորպեսզի պաստառն ամուր կերպով կպչի հողի
պատերին։

Այժմ դառնանք դռնակին. սա նույնպես մի գործվածք
ե, բայց շատ ավելի հաստ ու ամուր, քան պաստառը։ Դըռ-
նակի համար նա սովորականից ավելի պինդ թել ե բանե-
ցընում և, բացի դրանից, գործվածքի շերտերի արանքում
շինում ե ավագի մանրիկ հատիկներից բարակ շերտեր։
Յեզ այդ ահա թե ինչպես։ Միքանի շերտ գործելուց հետո
հավաքում ե փոքրիկ ավազահատիկներ և սրանց շարելով
իրար կողք - կողքի՝ պատրաստում ե գործվածքի վրա
մի բարակ ավազաշերտ։ Դրանից հետո նա նորից սկսում ե
հյուսվածք գործել և ծածկել այդ ավազաշերտը։ Այնուհետեւ
ավազահատիկներով ծածկում ե և այդ գործվածքը. այսպես
շարունակում ե նա այնքան, մենչեւ վոր ստացվում ե մի
հաստ և բավականին ամուր ու ծանր դռնակ։ Այս դռնակի

մի կողմը առաձգական հյուսվածքով միացնում ենա բնի պատերին, ճիշտ այնպես, ինչպես ժամացույցի կամ թանաքամանի կափարիչներն են լինում։ Ահա այս առաձգական հյուսվածքի պատճառով ե, վոր դոնակը բացվելուց հետո զսպանակավոր դռան նման փակվում ե ինքն իրեն։ Դոնակի ներքեմի յերեսը հարթ ե ու սպիտակ, իսկ վերեմի յերեսը, ընդհակառակը, ծածկված ե ավազահատիկներով։ Վերջիններս թե իրենց մեծությամբ և թե դասավորությամբ բոլորովին չեն տարբերվում շրջապատից, դրա համար ել դըռնակը շատ դժվար ե նկատել ավազածածկ գետնի վրա։

Կան սարդեր, վորոնք շինում են յերկհարկանի բներ։ Յերբ թշնամին հետապնդում ե, նրանք մտնում են իրենց բունը, և յեթե սրա վերեմի հարկը բավարար չափով չի կարող պաշտպանել նրանց, ապա անմիջապես անցնում են ներքեմի հարկը։ Այս հարկը իր կազմությամբ բոլորովին նման ե վերեվի հարկին և բաժանվում ե նրանից մի դոնակով։ Վերջինս միանգամայն նման ե դրսի դոնակին, այն տարբերությամբ միայն, վոր սա բացվում ե դեպի ցած, մինչդեռ դրսինը բացվում ե դեպի վեր։ Ներքեմի դոնակից կախված ե մի կիսալուսնաձև լաթ, դարձյալ թելից հյուսված և բավականին ամուր։ Յերբ պետք ե բանալ ներքեմի դոնակը, սարդը ձգում, քաշում ե այդ լաթը և դոնակը բացվում ե։ Այդ, իհարկե, այն դեպքում, յերբ սարդը գտնվում ե ներքեմի հարկում։ իսկ յերբ վերեմից ե ուզում ցած իջնել, այն ժամանակ իր մարմնի ծանրությամբ ընկնում ե դոնակի վրա, և սա բացվում ե։ Յեթե այդպես ե, նշանակում ե, այդ դոնակը կարող ե բացվել և հետապնդող միջատների ծանրության տակ։ Անշուշտ։ Սակայն սարդը մտնելով ներքեմի հարկը՝ անմիջապես դըռնակը կողպում ե մի ամուր կողպեքով։ Այս, կողպեքով, և այդ կողպեքի դերը կատարում ե ինքը սարդը։ Յեվ այդ հա թե ինչպես։ Դոնակի վրա շինում ե նա փոքրիկ փոսեր։

նման փոսեր շինում եւ և բնի պատերի վրա. Յերբ պետք եր դուռը փակել, նա իր ութ վոտներից չորսի յեղունգները մտցնում եր դռնակի փոսերի մեջ, իսկ մնացած չորսի յեղունգները՝ պատերի փոսերի մեջ և կողպեքը պատրաստ եր, ամուր և վատահելի կողպեք. Յերբ կողպեքը վրան եր, դռնակը յերբեք չի բացվում թշնամի միջատների ծանրության տակ:

Այսպիսի բներ շինում են միայն եգերը. արու սարդերը բնի կարիք չեն զգում. նրանք իրենց ամբողջ կյանքն անց են կացնում գետնի մակերեսույթի վրա: Եգերն այդ բների մեջ ձու յեն ածում և հոգում նրանցից դուրս յեկած ձագերի մասին: Նշանակում եր, այդ խորհրդավոր բները սարդերը հյուսում են իրենց փոքրիկ ու անողնական ձագերի համար:

* *

Սարդերի նման գործվածքներ են հյուսում նաև մի շարք թռչուններ, վորոնք հայտնի յեն ջուլիակներ անունով: Գործվածքներ հյուսելու համար սարդերն ունեն ամենագլխավոր



Հուլիակը բուն հյուսվիս

նյութը՝ թելը, մինչդեռ ջուլիակները գուրկ են դրանցից և ստիպված են այդ նյութը գտնել դուրս: Իսկ այդ հեշտ բան չե: Անհրաժեշտ ե ընկնել այս ու այն կողմը և հարմարավոր նյութ փնտռել: Այդպես ել անում են, մի տեղ գտնում

են նրանք կենդանական մազեր, մի այլ տեղ՝ բուսական թելեր: Հաճախ նրանք գործ են ածում և խոտերի ու յեղեղների թարմ ու փափուկ ցողուններ, յերբեմն ել ստիպված են լի-

նում կտրել մեծ ու յերկար տերևներից բարակ ու նեղիկ շերտիկներ։ Շերտիկներ կտրտելու և բուսական ցողուններից թելեր դուրս քաշելու համար նրանք առանձին գործիքներ չունեն, նրանց միակ գործիքն իրենց սուր, ուղիղ, կոնաձև և չափազանց ամուր կտուցն եւ։

Տաք յերկըներում ջուլհակները բնի համար անհրաժեշտ նյութը պատրաստում են սովորաբար արմավենիների մեծ տերևների բարակ շերտիկներից։ Ահա թե ինչ է պատմում մի ճանապարհորդ այդ մասին։

«Լճակի ափին,—ասում են նա,—կանգնած եր մի գեղեցիկ, բարեկազմ կոկոսյան արմավենի, վորի գաղաթին կար մի խոշոր ու փարթամ տերևների մի գեղեցիկ փունջ։ Մի որ նրա շուրջն սկսեցին հավաքվել ահագին քանակությամբ ջուլհակներ։ Ինչ կար այդտեղ և ինչու եյին հավաքվել այդ թոշունները, յես դեռ չգիտեյի և սկսեցի ուշադրությամբ հետեւ նրանց շարժումներին։ Յեվ ահա ինչ տեսա։ Նրանցից յուրաքանչյուրը վորոշ ժամանակ պտտվում եր տերևների շուրջը և հարմար վայրկյանը գտնելով՝ իջնում եր, կը տցով բռնում տերեւի յեղբերի վրա յեղած փոքրիկ ատամիկների մեջի ծայրից և ուժեղ թափով ցած նետվում։ տերեւից պոկվում եր մի նեղիկ ու յերկար շերտիկ։ Այս շերտիկը ջուլհակը կտցի մեջ առած՝ ողի մեջ խաղացնելով՝ վերցնում, գնում եր։ Առաջին ջուլհակին հաջորդում եր յերկընորդը, վոր նույն ձեռվ պոկում եր տերևներից նույնպիսի բարակ շերտիկ և հեռանում ապա յերկընորդին հաջորդում եր յերբորդը, չորրորդը և այդպես շարունակ։ Քիչ անցած՝ արմավենու փարթամ ու գեղեցիկ տերևների տեղը մընում են միայն վողորմելի մնացորդներ»։

Այս շերտիկները ջուլհակները տանում են իրենց բները հյուսելու համար։ Նրանք հյուսում են շատ բազմատեսակ բներ։ Այսպես, որինակ, հյուսում են նրանք գնդաձև, 22ա-

ձեւ, յերկար խողովակաձև, յերբեմն ել փոքրիկ քսակների
նժանվող բները Բները շինուած են իրար շատ մոտիկ, այն ես
ծառերի բարակ վոստիկների կամ ճյուղերի ծայրերին։ Այդ
բներն ամենաթեթև քամիներից անգամ ճոճվում են այս ու
այն կողմը։ Ճոճվող բների մեջ ջուլհակների ծագերն որորվում
են ճիշտ այնպես, ինչպես մեր մանուկներն որորոցներում։
Բայց որորվելու համար չեն շինուած ջուլհակներն իրենց բը-
ները վոստիկների ծայրերին։ Կա մի այլ պատճառ։ Այնտեղ,
վորտեղ ապրում են ջուլհակները, ապրում են նաև բազմա-
տեսակ կապիկներ ու ոձեր. սրանք ջուլհակների ամենակա-
տաղի թշնամիներն են. մագլցելով ծառերը՝ նրանք հասնում
են ջուլհակների բներին և ուտում նրանց մեջ յեղած թե-
ձվերը և թե ճուտերը։ Ահա այս թշնամիների ձեռքից իրենց
ծագերին ազատելու համար ե, վոր նրանք իրենց բները
հյուսում են ծառերի մատաղ ճյուղերի ծայրերին։ Յեվ իրավ.
Վոչ կապիկը կարող ե իր ծանր մարմնով հասնել այդ
ճյուղերին և վոչ ել ոճն իր յերկարուկ մարմնի գալարումնե-
րով։ Այդպիսով նրանց բները դառնում են թշնամիների հա-
մար անմատչելի բերդեր։ Յեվ այդ ե պատճառը, վոր շատ
անգամ նրանք իրենց ապահով բներում հանգիստ ու ապա-
հով նստած՝ դիտում են իրենց թշնամիներին և նրանց չա-
րացնում ու կատաղեցնում։

Սակայն հնարագետ կապիկը հաճախ դիմում ե խորա-
մանկ միջոցի. նա իր յերկար ձեռքերով բռնուած ե ճյուղերը
և քաշում, մոտեցնում իրեն այն վոստիկները, վորոնց ծայ-
րերին ջուլհակները հյուսել են իրենց բները։ Այդ ժամանակ
ջուլհակներն ահաբեկված դուրս են գալիս բներից և սկսում
բարձր ձայնով հավար կանչել։ Անմիջապես ոգնության են
հասնում մոտիկ տեղերում գտնվող բոլոր ջուլհակները։ Սրանք
գալիս են ծվալով, ծվծվալով։ Ոդը լցվում ե նրանց աղմու-
կով ու աղաղակով։ Այս աղմուկի շնորհիվ հավաքվում են

նաև հեռավոր տեղերում յեղողները, այնպես վոր շուտով
դեպքի վայրում ժողովում են ահազին թվով ջուլհակներ։
Մրանք բոլորն ել բերանները բացած՝ կատաղի կերպով հար-
ձակվում են կապիկի վրա։ Խեղճ կապիկը չգիտե ինչ անե։
Նա անմիջապես ճյուղը բաց ե թողնում և սկսում պաշտպան-
վել։ Զեռքն այս ու այն կողմը շարժելով՝ քշում հեռացնում
ե նրանց, բայց նրանք շատ չեն հեռանում, նորից մոտենում
են և ուզում են անպատճառ հանել նրա աչքերը։ Յեթե հե-
ռացնում ե աւջևում յեղուներին, յետեինները մոտենում
են և կտցում նրա մեջքը, գլուխը։ Կատաղում, փրփրում ե
կապիկը, բայց ինչ կարող ե անել։ Ամեն կողմից սուր կտուց-
ների հարվածներ են տեղում նրա վրա։ Վերջը կապիկը հու-
սահատված՝ աչքերը ծածկում, սկսում ե փախչել։ Զուլհակներն
անխնա կերպով հետապնդում են նրան, մինչև վոր վերջինս
մտնելով անտառի խորքը՝ ազատվում ե նրանցից։ Կապկին
փախցնելուց հետո ջուլհակները հաղթանակով վերադառնում
են, բայց յերկար ժամանակ դեռ չի դադարում նրանց աղ-
մուկն ու աղաղակը։

Ահա այսպես թշնամիներից ընդհանուր ուժերով պաշտ-
պանվելու համար ե, վոր նրանք իրենց բները շինում են իրար
մոտիկ։ Հաճախ միևնույն ծառի վրա կարելի յետեսնել տաս-
նյակու հարյուրավոր բներ։ Յերբեմն ել ջուլհակները շինում
են ընդհանուր բներ։ Այսպիսի ընդհանուր բների համար
ընտրում են նրանք մի հարմարավոր ծառ և նրա հաստ ճյու-
ղերի արանքում շինում են մի մեծ հովանոց, վոր նրանց բը-
ների համար դառնում ե մի ընդհանուր կտուր։ Հովանոցը
շինում են նրանք խմբովին, հավաքական ուժերով։ Ամենից
առաջ բերում են նրանք խոտերի յերկար ցողուններ և տե-
րեների նեղլիկ շերտեր։ Դրանցից պատրաստում են հովանո-
ցի հինածը ե ապա սկսում են հինածի արանքները լցնել
նուրբ ու բարակ թելերի հյուսվածքով։ Մի շերտը շինելուց

հետո ձիշտ նույն ձևով շինում են յերկրորդ շերտը, ապա
յերրորդը, մինչև վոր ստացվում ե մի հաստ ու ամուր, հովա-
նոցաձև կտուր: Այնուհետև այդ կտրի տակ սկսում են նը-
րանք շինել տասնյակ ու հարյուրավոր փոքրիկ բներ: Բների
թիվը գնալով ավելանում ե, վորովհետև նորելուկ ջուլհակ-
ները ևս այդ ընդհանուր կտրի տակ են շինում իրենց բը-
ները: Այսպիսով կտրի տակ առաջանում ե ջուլհակների մի
գյուղ կամ քաղաք, վոր հետզհետեւ աճում, մեծանում ե:
Պատահում ե յերբեմն, վոր կտուրը չդիմանալով բների ծան-
րության՝ փլվում ե և ջուլհակների բները թափվում են ցած:
Սակայն այդ աղետը, վորի ընթացքում ահագին թվով ձվեր
են փշրվում և ճուտեր ջարդութվում, ջուլհակներին չի հու-
սահատեցնում: Նրանք շուտով հաշտվում են պատահած դըժ-
բախտության հետ և նոր բնատեղ ընտրելով՝ անմիջապես ըս-
կըսում են ընդհանուր ուժերով մի նոր քաղաք կամ մի գյուղ
կառուցել:

Ջուլհակներն ունեն շատ տեսակներ. նրանց մեծ մասն
ապրում ե տաք յերկրներում, այսինքն այնտեղ, ուր ապ-
րում են կապիկները և ուր աճում են արմավենիները, սա-
կայն նրանց մի տեսակն ել ապրում ե Ռուսաստանում: Այս-
տեղ ապրող ջուլհակը գործում ե շատ գեղեցիկ բուն: Նրա
բունն արտաքինով նման է գնդի, վորի մի կողքի վրա շին-
ված ե խողովականման մի անցք:

Ռուսաստանի ջուլհակն իր բունը հյուսում ե այծի կամ
վոչխարի բրդից և զանազան տեսակի բուսական թելերից:
Ամենից շատ ոգտվում ե նա կանեփի ցողունի մեջ յեղած
թելերից, հաճախ ոգտվում ե նա նաև բարդի և ուռի ծառե-
րից քամու միջոցով այն ու այն կողմ տարվող բամբականը-
ման նյութից: Այս վերջինը թքով բաց ե անում նա, շինում
փոքրիկ գնդիկներ և ապա կտցի միջոցով բարակ թել ե
պատրաստում: Բուն շինելու ժամանակ այդ թելերը կամ

կենդանական մազերը փաթաթումե այն ճյուղին, վորից պետք ե կախվի բունը և ապա սկսում ե շինել բնի հինածը: Յերբ վերջինս պատրաստ ե արդեն, սկսում ե հյուսել բունը և հյուսում ե դարձյալ նման նյութերով: Ամուր ու դիմացկուն ե նրա պատրաստած հյուսվածքը: Բունը գործելուց հետո նա նրա մեջ փափուկ տեղ ե պատրաստում և ապա ձու ածում: Նրա բնի յերկարությունը սովորաբար լինում է 4-5 վերշոկ, իսկ լայնությունը՝ 2-3 վերշոկ: Զուլհակն իր բունը հյուսում ե տասը կամ տասներկու որվա ընթացքում: Յերբ աչքի առաջ ունենանք այն հանգամանքը, վոր նա իր բնի համար անհրաժեշտ նյութերը՝ թելերը կամ մազերը գտնում ե մեծ դժվարությամբ, ապա պետք ե ընդունենք, վոր նա բավականին արագ ե աշխատում:

* *

Թե սարդերը և թե ջուլհակներն իրենց ամուր ու դիմացկուն գործվածքները հյուսում են առանց վորեւ մեկի մոտաշակերտելու, հաճախ նույնիսկ առանց տեսած լինելու, թե իրենց նմաններն ինչպես են նման գործվածքները հյուսում: Նշանակում ե, նրանք ջուլհակության արհեստն իմանում են ի բնե, ի ծնե, կամ, ինչպես ասում են, բնազդաբար Մարդիկ, իհարկե, այդպես չեն. ջուլհակություն սովորելու համար նրանք անպայման պետք ե աշխատեն վարպետների մոտ: Սակայն մարդիկ այնուհետև իրենց յուրաքանչյուր քայլը կատարում են գիտակցութեն և դրա համար ել շուտով առաջադիմում են և կատարելագործվում իրենց արհեստի մեջ: Յեվ իրավ, այն ժամանակ, յերբ սարդերն ու ջուլհակները ջուլհակություն գիտեյին, մարդիկ դեռևս գաղափար չունեյին այդ արհեստի մասին և ման եյին գալիս մերկ և կամ ծածկվում եյին կենդանիների մորթիներով, բայց հետո սովորելով գործվածքներ հյուսելու արհեստը՝ շուտով

վերջինս կատարելագործում են այնքան, վոր սկսում են
պատրաստել բազմատեսակ գործվածքներ։ Ավելին։ Մարդիկ
սկսում են հնարել և տեսակ-տեսակ գործիքներ ու մեքե-
նաներ, վորոնց միջոցով արագ ու հաջող կերպով պատրաս-
տում են ամեն տեսակի գործվածքներ։ Այսպես են մարդիկ,
իսկ սարդերն ու ջուհակները։ Սրանք մնացել են նույն ջուլ-
հակներն, ինչ վոր յեղել են թերևս հազարավոր տարիներ ա-
ռաջ, և ով գիտե, թե այսուհետեւ դեռ ինչքան ժամանակ
պետք ե մնան նույն վիճակի մեջ։

ԾԵՓՈՂՆԵՐԸ

Կենդանական աղբի վրա շատ հաճախ կարելի յե՛տեսնել
սևավուն գույն ունեցող փոքրիկ բզեզներ, վորոնք մեծ յե-
ռանդով գնդեր են ծեփում աղբից: Յեթե դիտենք նրանց
աշխատանք կատարելիս, կտեսնենք, վոր նրանք գործում են
գլխով և առջևի վոտներով: Նրանց գլուխը տափակ ե, լայն
և ունի ատամնավոր յեզրեր: Այդ գլուխը նրանց համար բա-
հի դեր ե կատարում: Առջևի վոտները մեծ են, ուժեղ, հաստ,
ամուր և ունեն իրենց առջևի մասի վրա ատամիկներ: Այս
վոտներն ել բանեցնում են նրանք վորպես փոցխեր: Յերբ
պետք ե գունդ ծեփել, նրանք աղբի մեջ ընտրում են մի
փոքրիկ կտոր, վոր գնդի նմանություն ունի և ապա սկսում
են այդ փոքրիկ գունդը հետզհետե մեծացնել: Յերեխաները
մեծ ձյունագունդ պատրաստելու ժամանակ՝ սովորաբար շի-
նում են մի փոքրիկ գունդ և ապա սկսում գլորել ձյունով
ծածկված գետնի վրա: Իսկ վարպետները փայտից կամ մե-
տաղից գնդեր շինելու ժամանակ վորոշ գործիքների միջոցով
փայտի կամ մետաղի կտորը պտտեցնում են շարունակ և
սուր գանակներով գնդի ձև տալիս: Սակայն մեր բզեզները
գունդ շինելիս վոչ պտտեցնում են գունդը և վոչ ել գլորում
աղբի մեջ: Ավելին: Նրանք իրենց գունդը յերբեք տեղից չեն
շարժում: Նստում են իրենց ընտրած փոքրիկ գնդիկի վրա,
բռնում այն իրենց յետևի յերկու գույգ վոտներով, մանա-
վանդ վերջին զույգով, վորոնք բավական յերկար են և ու-
նեն իրենց ծայրերին փշիկներ, և ապա սկսում են գլխով և
առջևի վոտներով աշխատել: Գլխով աղբից կտրում են փոք-
րիկ մասնիկներ, իսկ առջևի վոտներով այդ մասնիկները մո-

տեցնում են գնդին և ճմլելով կպցնում նրա զանազան մասերին։ Այսպիսով գնդի վրա նստում են նորանոր շերտեր, վորից գունդը հետզհետե մեծանում է։ Աշխատանքի ժամանակ նրանք յերբեք գնդից չեն իջնում։ Յեվ ինչ կարիք կա իջնելու. չե՞ վոր նրանց շուրջն առատ նյութ կա. հարկավոր ե միայն հավաքել այդ նյութը և ծեփել։ Բայց նրանք շարունակ պտտում են գնդի վրա։ Ուրիշ կերպ ել չեր կարող լինել, չե՞ վոր պետք ե շերտեր կպցնել գնդի բոլոր մասերին։

Մեր բզեզներն այդ աշխատանքը կատարում են բավական արագ, մանավանդ տաք յեղանակներին։ Յեվ այդ միանգամայն հասկանալի յե. այդպիսի յեղանակներին աղբը կարող ե շուտով չորանալ և անպետքանալ։ Բայց չնայած դրան, նրանք շինում են այնպիսի գնդեր, վորոնց վրա անհընարին և պակասություն գանել։

Գունդը շինելուց հետո նրանք անմիջապես աշխատում են հեռացնել աղբակույտի մոտից։ Յեվ այդ ահա թե ինչու, նրանք կերակրվում են աղբով։ Յեվ վորովհետեւ աղբի մեջ չափազանց քիչ մննդարար նյութեր կան, դրա համար ուտում են չափազանց շատ։ Յեթե նրանք հենց այնտեղ աղբի մոտ մնային և այնտեղ աշխատեյին իրենց քաղցը հագեցնել, կարող եյին յենթարկվել հազար ու մի վտանգի, մանավանդ վոր աղբը սովորաբար լինում ե ճանապարհների վրա, վորտեղ շարունակ անցուղարձ ե լինում։ Ահա հենց այդ պատճառով նրանք աղբից գնդեր են շինում և այդ գնդերը տպնում վորեւ ապահով տեղ և այնտեղ հանգիստ կերպով խժուում։

Այժմ տեսնենք, թե նրանք ինչպես են գունդը տեղափոխում։

Տեղափոխելու համար նրանք գունդը բռնում են իրենց յետերի յերկար վոտներով և սրանց վրա գտնված սուր փըշիկները մտցնում նրանց մեջ։ Դրա համար նրանք բարձրացնում են իրենց մարմնի յետերի մասը և գնում գնդի վրա։

Այդ ժամանակ հենվում են նրանք գետնին միայն իրենց միջին վոտներով, իսկ առջևի վոտներով հրում են զունդը դեպի յետ Նշանակում ե, զունդը տեղափոխելիս նրանք աշխատում են գլխիվայր դրության մեջ։ Այդ դիրքը զուցե շատերի համար անհարմար լինի, բայց մեր բզեզների համար դա ամենաարմար դիրքն ե, այլապես հազիվ թե կարողանային նրանք շարժել իրենցից միքանի անգամ մեծ զունդը։ Հարթ տեղերով նրանք զունդը բավական արագ կերպով են շարժում. սակայն հաճախ ստիպված են լինում բարձրացնել զունդը և զառիվեր տեղեր։ Այդպիսի դեպքերում շատ անգամ զունդը դուրս ե ընկնում նրանց ձեռքից և ցած դորվում։ Այդ ժամանակ նրանք իսկույն իրենց յերեք զույգ վոտներով արագ կերպով վազում են գնդի յետեից և բըռնելով՝ նորից նույն ճանապարհով աշխատում են վեր բարձրացնել։ Յեթե զունդն այս անգամ ել կոչելով վորեե իրի՝ դարձյալ դուրս ե ընկնում նրանց ձեռքից և ցած գլորվում, նրանք այս անգամ ևս առանց հուսահատվելու վազում, բըռնում են և նորից աշխատում վեր բարձրացնել։

Ավանդությունը պատմում ե, վոր հին Հունաստանում յեղել ե Սիզիֆ անունով մի թագավոր, վոր իր մեղքերի համար դատապարտվել ե հանդերձյալ կյանքում մի ծանր քար գլորելով՝ բարձրացնել լեռան գըլուխը. և ահա, յերբ նա ահազին ճիգ ու ջանք դործ դնելով մոտեցնում ե լեռան դադաթին այդ քարը, վերջինս դուրս ե պրճնում նրա ձեռքից և ցած գլորվում։

Ծնվողները զլորում են զունդը

Պատկեր զունդում մոտեցնում ե լեռան դադաթին այդ քարը, վերջինս դուրս ե պրճնում նրա ձեռքից և ցած գլորվում։



Յեվ այս պատմությունը կրկնվում եւ շարունակ։ Մեր բգեղ-ները հաճախ գտնվում են Սիզիֆ թագավորի վիճակի մեջ և հենց այդ եւ պատճառը, վոր նրանց մի տեսակը կոչվում է Սիզիֆ։ Անունն, ինչպես տեսնում եք, չափազանց հարմար է։

Սակայն մեր բգեղները գունդը տեղափոխելիս բացի այդ պատահարներից, հանդիպում են նաև ավազակային հարձակումների։ Հենց այն ժամանակ, յերբ նա դժվարությամբ աշխատում եւ գունդը շարժել, մեկ ել տեսար, մի այլ բգեղթուշելով յեկավ, ցած իջավ գնդի մոտ և իր առջևի վոտներով այնպես ամուր կերպով գարկեց մեր աշխատավոր բգեղին, վոր վերջինս գնդից պոկվելով՝ մեջքի վրա փովում եւ գետնին։ Յեվ մինչև վոր սա ուշքը գլուխը հավաքելով՝ վոտների շարժումների միջոցով իրեն կուղղի, ավազակն արագ կերպով բարձրանում եւ գնդի գլուխը և այնտեղ դիրք բըռնելով՝ սպասում եւ հարձակման։ Շուտով տերն ուղղվում եւ և մոտենալով գնդին՝ սկսում եւ շուռումուռ պտտվել նրա շուրջը։ Ինչպես յերևում ե, նա աշխատում եւ հարմար վայրկյան գտնել իր թշնամու վրա հարձակվելու համար։ Բայց ավազակը քնած չե։ գնդի վրա կանգնած՝ նա շարունակ փխում ե իր դիրքը և աչալուր կերպով հետեւում տիրոջ բոլոր շարժումներին։ Յեվ յեթե տերը զայրանալով՝ հարձակում ե գործում, նա վերեից իր առջևի ուժեղ վոտներով նրան հաջողությամբ դեն ե շպրտում։ Վերջը տերը տեսնելով, վոր այդ միջոցով չի կարող իր աշխատանքի պտուղը խլել ավազակի ձեռքից, փոխում ե իր գործելու յեղանակը։ Նա գըլուխը կոխում ե գնդի տակը և սկսում ե հողը փորել։ Քիչ անցած, գունդը կորցնելով իր հավասարակշռությունը՝ ըսկըսում ե գլորվել։ Ավազակը ճարպիկ շարժումներ կատարելով՝ աշխատում ե մնալ գնդի վրա։ սակայն շատ անգամ այդ չի հաջողվում նրան և նա ցած ե գլորվում։ Այդ ժամանակ արդեն յերկուսն ել գտնվում են նման պայմաններում և

նրանց մեջ առաջանում ե մի կատարյալ ըմբշամարտ։ Կատաղի կերպով նրանք իրար են զարկվում։ այդտեղ գործում են գլուխը, վոտները։ Յեթե այդ ժամանակ մեկը գետին ե տապալվում, ապա մյուսն իսկույն գնում բարձրանում ե գունդը և այստեղ դիրք գրավում։ Հաղթվածը հաճախ հուսահատվում ե և թողնում, հեռանում։ Սակայն պատահում ե նաև, վոր նրանց կռվի ժամանակ վրա յե հասնում մի յերբորդը և ոգտվելով նրանից, վոր նրանք կռվով են զբաղված՝ գունդը վերցնում ե և փախչում։

Սակայն թշնամին շարունակ այդպես բացարձակ չի գործում, հաճախ նա մոտենում ե բարեկամի ձեռվ։ Յեվ այդ ահա թե ինչպես։ Յերբ աղբակույտի մոտ միքանի բզեզներ իրենք իրենց համար գնդեր են շինում, հանկարծ մինը տեսնում ե, վոր իրենցից մեկն արդեն իր գունդը շինել, վերջացրել ե և պատրաստվում ե տեղափոխելու, իսկույն թողնում ե իր աշխատանքը և մոտենում ե նրան, աշխատում ե ցույց տալ, վոր ուզում ե ոգնել նրան գունդը տեղափոխելու գործում։ Յեվ մինչդեռ գունդ պատրաստողը գունդը բռնում ե իր յետեի յերկար վոտներով և գլխիվայր դիրք ընդունելով՝ առջեկի վոտներով հրում ե դեպի յետ, այս ոգնական ձեռացողը, ընդհակառակը, գունդը բռնում ե իր առջեկի վոտներով և հենվում գետնին իր յետեի յերկար վոտներով։ Դուրս ե գալիս այնպես, վոր գնդի տերը գունդը հրում ե դեպի յետ, իսկ այս ոգնականը բռնում ե այդ գունդը և բաշում։ Վորոշ դեպքերում այդ ոգնությունն իսկապես աշխատանքը դյուրացնում ե, բայց առհասարակ դա վոչ մի ոգուտ չի տալիս, բացի մնասից, վորովհետեւ շատ անգամ պատճառ ե դառնում, վոր գունդը դուրս ե պըծնում և գլորվում։ Այդ ժամանակ յերկուսն ել վազում են գնդի յետեից, բռնում և նորից բերում իր տեղը։ Յերբեմն ոգնականը տեսնելով, վոր ինքը միայն խանգարում ե, հավաքում ե իր վոտները փորի

տակ և այդպես կծկվելով՝ կպչում գնդին։ Այդ դեպքում տերըն ստիպված ելինում գնդի հետ միասին նրան ևս շարժելու Յեվ այդ բոլորը նրա համար, վոր վերջն ել իր քրտնքի արդյունքից նրան բաժին տա։

Ոգնականը, սակայն, իր չար դիտավորությունը դեռ յերեան չի հանում. նա սպասում է հարմար առիթի։ Վերջը գունդը հասցնում են նրանք հարմար վայրը։ Այդտեղ տերն սկսում է քանդել հողը։ Այդ ժամանակ տիրոջ գլուխն ու առջեկի վոտները յեռանդուն կերպով սկսում են գործել, իսկ ոգնականն անշնչացածի պես կպած է գնդին։ Շուտով հողի մեջ առաջանում է մի փոքրիկ փոս։ Տերն այդ փոսի մեջ շարունակում է իր աշխատանքը նույն յեռանդով։ Բայց նա հանգիստ չե. ինչպես յերեսում է, նա չի վստահում իր բարեկամին, դրա համար ել շուտ-շուտ դուրս ե. գալիս փոսից և դիտում իր ապրանքը։ Ոգնականը դեռ այնտեղ է, իր առաջվա վիճակում։ Նշանակում է, դեռ հարմար ըռպես չի ընկել։ Տերը շարունակում է իր աշխատանքը. այժմ նա բավականին խորացել է հողի մեջ և հափշտակված իր աշխատանքով, ել այնպես շուտ-շուտ չի դուրս գալիս իր ապրանքը դիտելու։ Հարմար ըռպեն մոտենում է։ Մի անգամ ել, յերբ դունդը դիտելուց հետո տերը մտնում է փոսի մեջ և քափ ու քրտինք մտած՝ աշխատում է փոսն ավելի ու ավելի խորացնել ու լայնացնել, ոգնականը հանկարծ դուրս ե. գալիս իր կծկված վիճակից և հափշտակված իր բոլոր ուժերը՝ գունդն առնում է և փախցնում։ Հետքը կորցնելու համար նա հաճախ գնում է ծուռումուռ ճանապարհներով։ Տերը փոսից դուրս գալով, յերբ տեսնում է, վոր գունդը չկա, իսկույն, առանց ժամանակ կորցնելու, գնում է փնտռելու։ Ցերը ոգնականը նկատում է տիրոջ, սկսում է սատանայություն անել. նա անմիջապես փոխում է դիրքը, կանգնում է յետեի վոտների վրա և առջեկի վոտներով բռնում է գունդը։ Կարծես դրանով

ուզում եւ ասել-գունդն ինքն իրան գլորվեց, բայց յես, ահա, յետեից հասնելով, բռնել եմ և պահում եմ: Տերը, ճարը կըտրած, հաշտվում եւ պատահած գեպքի հետ և աշխատում եւ գունդը կրկին առաջվա տեղը բերել: Ոգնականն իր վատությունը թագցնելու հոմար ստիպված եւ լինում տիրոջն ոգնել այդ աշխատանքի մեջ:

Սակայն պատահում ենան, վոր ոգնականը կարողանում եւ գունդը փախցնել այնպես արագ և ճարպիկ կերպով, վոր տիրոջը չի հաջողվում հետքը գտնել: Այդ գեպքում տիրոջ ամբողջ աշխատանքը ջուրն եւ ընկնում: Աշխատել այնքան, և ահա, հենց այն ժամանակ, յերբ այդ աշխատանքը վերջանալու վրա յեւ և պետք եւ վայելինը պտուղը, ամեն ինչ հանկարծ կորչում եւ: Ծանր եւ այդ, բայց վոչ հուսահատական: Բզեզը դրանից հետո, առանց յերկար ու բարակ մտածելու՝ բաց եւ անում իր թերը, թռչում այս ու այն կողմը, գտնում եւ թարմ աղբակույտ և սկսում նոր գունդ շինել:

Իսկ յերբ այդպիսի պատահարներից կարողանում եւ փրկել գունդը, այն ժամանակ վերջինս մտցնում եւ հողի մեջ փորած փոսի մեջ, ծածկում փոսի բերանը և գլուխը կոխելով գնդի մեջ՝ սկսում եւ խժուել: Յեվ խժուում եւ անընդհատ, որ ու գիշեր, այնքան, մինչև վոր սպառվում եւ ամբողջ աղբը: Նա չափազանց շատակեր եւ, և ուրիշ կերպ չեր ել կարող լինել, չե՞ վոր նրա կերածն աղբ ե, վորի մեջ չափազանց քիչ են սննդարար նյութերը: Յերբ ամբողջ գունդն ուտում վերջացնում եւ, դուրս եւ գալիս փոսից և գնում նոր գունդ շինելու:

Մեզնից հազարավոր տարիներ առաջ յեգիպտացիները տեսնելով այդ բզեզներին գնդեր գլորելիս, համոզված են յեղել, վոր այդ գնդերի մեջ գտնվում են բզեզի ձվերը: Յեվ այդ սխալը շարունակվել եւ մինչև վերջին ժամանակներս: Միայն ֆրանսիացի նշանավոր միջատագետ Ֆարբն եւ յեղել,

վոր ուշադիր ուսումնասիրության յենթարկելով այդ բգեղների կյանքը՝ հաստատում եւ անվիճելի կերպով, վոր բգեղները գնդերը շինում են միայն նրա համար, վոր կարողանան աղբը տեղափոխել վորևե հարմար և ապահով վայր, այնտեղ հանգիստ կերպով խժուելու համար:

Այժմ - տեսնենք, թե ինչպես են բազմանում այդ բգեղները: Դիտողությունները ցույց են տվել, վոր այդ բգեղներն իրենց ձվերն ածում են աղբի մեջ, բայց դրա համար շինում են աղբից փոքրիկ տանձիկներ: Այս տանձիկները շինում են նրանք մեծ մասամբ վոչխարի աղբից, վորովհետեւ վերջինս ավելի նուրբ ե, քան տավարի, ձիու և կամ եշի աղբը: Տանձիկները շինում են մեծ խնամքով. նրանց սակերեսույթը լինում է հարթ և պինդ, վոր յերկար ժամանակ պաշտպանում են նրանց չորացումից: Յուրաքանչյուր տանձիկի մեջ ածում են միայն մի հատիկ ձու, վոր տեղափորված եւ տանձիկի սուր ծայրին, մի փոքրիկ փոսի մեջ: Վտանգներից ազատ պահելու համար հողի մեջ շինում են նրանք լայն ու ընդարձակ բներ և տանձիկները տեղափորում այնտեղ: Զվից դուրս յեկած փոքրիկ թըրթուրը կերակրի համար դես ու դեն ընկնելու կարիք չունի. նրա կերակուրը գտընվում է իր շուրջը, այն ևս մեծ առատութանձիք, վորի ծայրին թյամբ, և ահա նա ագահությամբ խժուում ե այդ կերակուրը և արագ կերպով մեծանում: Կատարյալ հասունության հասնելուց հետո հենց այդ տանձիկի մեջ ել հարսնյակ ե դառնում և ապա կերպարանափոխվելով՝ բգեղ ե դառնում և դուրս գալիս:

Բգեղների մի մասը տանձիկները տեղափորելով հողի մեջ շինված ապահով վայրերում, թողնում, հեռանում են, իսկ մյուսներն, ընդհակառակն, մնում են այնտեղ իրենց տան-

ձիկների մոտ այնքան, մինչև վոր նրանցից դուրս են գալիս նոր բղեգներ և նրանց հետ միասին դուրս են գալիս լույս աշխարհ։

Գնդեր և տանձիկներ ծեփող բգեզները շատ տեսակ-ներ ունեն: Հայաստանում կամ առհասարակ Անդրկովկասում ապրում են նրանց միքանի տեսակները: Այս տեսակներից մեկն ել Սիզիֆն եւ: Սրանք իրենց ծեփելու արվեստը, նույնպես և գնդեր տեղափոխելու և հողի մեջ նրանց թագցնելու յեղանակն իրենց ծնողներից կամ մյուս բգեզներից չեն սովորում. նրանք այդ բոլորն իմանում են ի բնե և կատարում են բնագդաբար, ճիշտ այնպես, ինչպես բադի ճուտն առանց սովորելու լողալ ե իմանում, հավել ճուտը՝ կուտ ուտել և մանուկը ծիծ ուտել:

ՎՈՐՄՆԱԴԻՐՆԵՐԸ

Կենդանիների մեջ վորմնադիրներ շատ կան, բայց նրանց մեջ առանձնապես աչքի յե ընկնում մի տեսակ պիծակ, վոր եվմեն ե կոչվում։ Սա մոտ կես վերշոկ յերկարությամբ մի միջատ ե՝ կես սև և կես դեղին գույնով, փորը կլորիկ, գնդաձև և միացած կրծքի հետ մի բարակ յերկարուկ պարանոցով։ Ունի մի զույգ թևեր և թռչում ե շատ արագ, և համարյա անլսելի կերպով։ Եվմենն արտաքինով մի սովորական միջատ ե, բայց իր արհեստով կարող ե շատ ու շատ մարդկանց նախանձը շարժել։ Վորմնադիրներն, ինչպես գիտեք, տուն շինելու ժամանակ ունենում են մի շարք ոգնականներ, այսպես, որինակ, շաղախ պատրաստողներ, քար տաշողներ կամ աղյուս շինողներ, ապա տան հատակագիծը պատրաստող ճարտարապետ և այլն, սակայն եվմենն այդպիսի ոգնականների կարիքը չի զգում։ Նա մեն-մենակ ե շինում իր տունը, վորովհետեւ ինքը և՛ ճարտարապետ ե, և՛ շաղախ պատրաստող, և՛ պատ ծեփող, և՛ հարմար քար գտնող։

Տեսնենք, թե ինչպես ե շինում այդ փոքրիկ վորմնադիրն իր տունը։

Ամենից առաջ, հասկանալի յե, վոր տան համար պետք ե հարմարավոր տեղ ընտրել։ Այդպես ել անում ենա։ Տան համար տեղ ե գտնում նա կամ պատերի, կամ քարաժայոերի և կամ այս ու այն տեղ ընկած մեծ քարերի, յերբեմն ել ծառերի կամ թփերի ճյուղերի վրա։ Տեղ ընտրելուց հետո ծրումն մի կանոնավոր շրջան։ դա նրա տան հատակագիծն ե։ Հատակագիծը

պատրաստելուց հետո սկսում ե աշխատանքը։ Տունը շինում
ե նա քարից և շաղախից, ուրեմն, պետք ե պատրաստել այդ
նյութերը։ Շաղախի համար հարկավոր կիրը գտնում ե ճա-
նապարհների և կամ տների պատերի վրա։ այդ կիրն այնու-
հետև խառնում ե թքի հետ, և շաղախը պատրաստ ե։ Այդ-
պես պատրաստած շաղախն անմիջապես տանում ե ընտրած
վայրը և այնտեղ տան հիմքը դնում։ Արագ և յեռանդով ե
գործում մեր վորմնադիրը։ Նա մեկ թռչում ե այնտեղ, վոր-
տեղ կիրն ե գտնվում և մեկ ել այնտեղ, վորտեղ կառուց-
վում ե տնակը։ Կարճ ժամանակից հետո տնակի տեղում
առաջանում ե շաղախից շինված մի շրջան։ Քանի շաղախը
գեռ չի չորացել, պետք ե քար բերել։ Յուր չկա, վոր նրա տնակի
համար անհրաժեշտ են փոքրիկ քարեր։ այդպիսի քարեր գըտ-
նում ե նա ճանապարհների վրա, ուր անցուղարձի ժամա-
նակ քարերը տրորվում, ջարդվում են։ Այդտեղ ուշադրու-
թյամբ դիտում ե նա քարի փոքրիկ կտորները, լավ տնտղում
և յերբ տեսնում ե, վոր այս կամ այն քարի կտորը պակա-
սություն չունի, անմիջապես վերցնում ե և թոցնում։ Ամե-
նից շատ սիրում ե նա ավագի փոքրիկ ու փայլուն հատիկները։
Քարի կտորները կամ ավագահատիկները տեղ հասցնելուց
հետո դնում ե նա շաղախի վրա և ճնշում։ Այդ ճնշման ազ-
դեցության տակ նրանք խրվում են շաղախի մեջ։ Քարերը
շաղախի վրա դնելու ժամանակ այնպես ե անում, վոր քարի
սուր ծայրերը ուղղված չլինեն դեպի տնակի ներսը։ Պատ-
ճառը հասկանալի յե. տնակի ներսը պետք ե հարթ կերպով
ծեփված լինի, ուրեմն քարի սուր ծայրերը չեն կարող գե-
պի ներս ուղղված լինել։ Քարերի շարքը շաղախի վրա վեր-
ջացնելուց հետո նա կրկին շաղախի պատրաստություն ե տես-
նում։ Շաղախով լցնում ե քարերի արանքը և ապա դնում
շաղախի յերկրորդ շերտը։

Ճիշտ այդպես են պատ դնում և մարդիկ. Նախ շաղախ են անում, ապա նրա վրա քար կամ աղյուս շարում, սեղմում, ամրացնում և հետո նրանց արանքները լցնում շաղախով: Այս գործողությունը վերջացնելուց հետո կրկին շաղախի շերտ են դնում և այդպես շարունակում, մինչև վոր պատըն ավարտվում ե: Մեր վորքրիկ վորմնադիրն ել նույն ձեռվ դնում ե իր պատի վրա յերկրորդ, յերրորդ շերտերը և հետըգհետե բարձրացնում: Սակայն ինչքան բարձրանում ե պատը, այնքան նա պատի շրջանը նեղացնում ե: Այդպիսով պատի յեզրերը հետզհետե մոտենում են իրար. այնպես վոր նրա տնակը կամաց-կամաց գմբեթինմանություն ե ստանում:

Գմբեթ շինելու ժամանակ մարդիկ ներսից փայտից գըմբեթանման հենարան են պատրաստում և ապա նրա վրա կառուցում գմբեթը: Պատճառը հասկանալի յե. յեթե այդ փայտյա հենարանը չլիներ, քարերն ու աղյուսները շաղախի փափուկ ժամանակ ցած կթափվեյին, ուրիշ կերպ ասած, պատը կփլեր: Մեր վորմնադիրը, սակայն, այդպիսի փայտյա հենարանի կարիքը չի զգում: Նա իր գմբեթանման տնակը շինում և առանց հենարանի, վորովհետեւ նրա տնակն առանց դրան ել փուլ չի գա: Յերբ տնակը գմբեթի կամ կիսազնդի ձե ե ընդունում, սկսում ե շինել նրա բերանը: Յեվ այդ ահաթե ինչպես: Յերբ պատի յեզրերն այնքան են մոտենում իրար, վոր գոյանում ե մի փոքրիկ անցք, վորի միջով կարող ենա ներս մտնել, նա կանգ ե առնում և սկսում ե շինել տնակի վրա մի պարանոց: Այս պարանոցը շինում ե նա միայն շաղախից: Սկզբում պարանոցը նման ե լինում խողովակի, բայց քիչ հետո նա այդ խողովակի յեզրերն սկսում ե լայնացնել. Դրանից պատերն սկսում են մի տեսակ ծալվել դեպի դրսի կողմը, այնպես վոր վերջն ստացվում ե ջրամանի բերանի նման մի բան:

Տնակն արդեն պատրաստ ե:

Բայց ում համար եւ շինում նա այդ տնակը: Ի՞ր վոչ
յերբեք: Նա այդ տնակում չի ապրում: Տնակը շինում եւ նա
իր ձագի համար: Յեվ բանն այն ե, վոր տնակի մեջ ապրում
եւ միայն մի հատ ձագ: Սակայն, վորմնադիրը մի ձագով չի
բավականանում: Ահա այդ պատճառով ել շինում եւ նա շատ
ու շատ տնակներ: Ինչքան մեծ հոգս եւ ծանրացած նրա վրա:
Բայց վոչինչ. նա այդ ծանր աշխատանքը կատարում եւ սի-
րով, առանց տրտնջալու: Հաճախ վորմնադիրը տնակները շի-
նում եւ իրար կողք-կողքի: Յեվ այդ վոչ առանց նպատակի.
այդ ժամանակ մի տնակի պատը ծառայում եւ իրեն պատ և
մի այլ տնակի համար, ճիշտ այնպես, ինչպես կից սենյակ-
ների մեջ գտնված ընդհանուր պատերը: Ուրեմն, այդպիսով
նա բավականին աշխատանք եւ տնտեսում:

Այժմ տեսնենք, թե ինչ եւ անում նրա ձագը տնակի մեջ:

Յերբ տնակը պատրաստ եւ, վորմնադիրն ամենից առաջ
այնտեղ պաշար եւ հավաքում ձագի համար: Պաշարի վերա-
բերմամբ նա բավականին բծախնդիր ե. ամեն բան նա ձա-
գին հրամցնել չի կարող, նրա ձագն անպայման պետք
եւ ունենա վորոշ կերակուր: Յեվ գիտեք ինչ:—Փոքրիկ
փափլիկ թրթուռներ, ուրիշ վոչինչ: Բայց այդ դեռ բավա-
կան չե: Այդ թրթուռները պետք եւ անպատճառ թարմ լինեն:
Մեռած և թարմությունը կորցրած թրթուռները ձագը չի
ուտում: Յեվ ահա՝ յերբ տնակը պատրաստ եւ, վորմնադիրն
այս ու այն կողմ ընկնելով՝ գտնում եւ այդպիսի թրթուռներ
և բերում, ամբարում տնակի մեջ: Թրթուռները բերում եւ
նա վողջ-վողջ: Սակայն կենդանի թրթուռները կարող են
տնակի մեջ տրորել, ջարդել նրա ձագին, յերբ վերջինս դեռ
պստիկ եւ ու անոգնական: Ուրեմն պետք եւ նրանց անվտանգ
դարձնել: Բայց ինչպես: Դրա միջոցը գիտե նա. նա խածում
եւ թրթուռների մարմնի մի վորոշ մասը և այնպես, վոր
նրանք վոչ թե մեռնում են, այլ մի տեսակ անդամալույժ են


դառնում և այլես չեն կարողանում ազատ շարժումներ կատարել։ Ահա այդպիսի անդամալույծ, կամ ավելի ճիշտ ասած, կաթվածահար յեղած թրթուռներ եւ նա ամբարում տնակի մեջ, այն ևս վորոշ թվով։

Պաշարի պատրաստություն տեսնելուց հետո նա սկսում է մտածել ձագի մասին։ Նա կենդանի ձագ չի հանում, բոլոր միջատների նման նա ևս բազմանում է ձվերի միջոցով, և ահա՝ նա տնակի մեջ մի հատիկ ձու յեւ ածում։ Սակայն այդ ձուն պետք է զանազան վտանգներից ապահովված լինի. չե՞ վոր այնտեղ, տնակի մեջ կան թրթուռներ, վորոնք թեպետ ազատ շարժումներ չեն կարող են հեշտությամբ մնասել նրան։ Վոր մնալու դրա դեմ ևս միջոց ունի. Նա իր ձուն կապում է մի թելից և կախում տնակի գագաթից։ Ազատ, անվտանդ այդ ձուն մնում է կախված վերեկից և ներքեռում թափած թրթուռները յերեկի չեն ել մտածում, թե այդ ձվի մեջ ինչ դարհուրելի թշնամի յեւ զարգանում։

Չուն ածելուց և ապահով տեղ կախելուց հետո վորմնադիրը մի գործ ևս ունի անելու։ Տնակի բերանը դեռ բաց է. այդպես թողնել չի կարելի, վորովհետև այնտեղից զանազան թշնամիներ կարող են ներս մտնել և վոչ միայն ձագի հանգիւոք ևս սնդարել, այլ և նրան բոլորովիս վոչնչացնել։ Պետք է, ուրեմն, այդ անցքը փակել. և վորմնադիրն այդպես ել անում է. Նա շաղախի մի բարակ շերտով փակում է անցքը և ուղիղ մեջտեղում դնում մի փոքրիկ քար կամ՝ ավագահատիկ։ Զարմանալի բան։ Վորմնադիրը, վոր տնակի պատերի համար քարեր կամ ավագահատիկներ ընտրելիս այնքան ել խառապ ահանջ չեր, տնակի կտրի մեջտեղում դրվող այդ քարի վերաբերմամբ չափաղանց բծախնդիր եւ։ Այդ քարը պետք է լինի անպայման սիրուն, դեղեցիկ և փայլուն։ Դա նրա աշխատանքի վերջին գործողությունն է և, ինչպես յերեռում է,

ուղում ե նա, վոր այդ շաբժողությունը լինի անթերի, գեղեցիկ: Դրանից հետո վորմնադիրն աշխատանքն ավարտած ե համարում: Այնուհետև սկսում ե նա շինել յերկրորդ տնակը, ապա յերրորդը, չորրորդը և այլն: Յեզ ամեն մի տնակ շինում ե նա բարեխղճությամբ, ինչպես բարեխղճությամբ շինել եր առաջինը:

Այժմ տեսնենք, թե ինչպես ե մեծանում վորմնադրի ձագը տնակի մեջ: Այդ իմանալու համար մարդիկ զանազան փորձեր են կատարել, բայց անհաջող: Բանն այն ե, վոր տընակը փակ ե ամեն կողմից և չի կարելի դիտել նրա մեջ կատարվող գործողությունները: Քանի-քանի անգամ տնակը կարել, բաց են արել, բայց վորովհետև այդ ժամանակ վնասել են և ձագին, ել չեն կարողացել նրա կյանքը, ինչպես հարկն ե, ուսումնասիրել: Վերջը ֆրանսիացի հայտնի միջատագետ Ֆարըը դաշտ ե միջոցը: Նա մի սուր գործիքով տնակի մի կողմում ամենայն զգուշությամբ մի փոքրիկ անցք ե բաց արել և այնտեղից դիտել ներսում կատարվող յերեգույթները: Յեզ ահա ինչ ե նկատել նա:



Վորմնադրի տնակի կտրվածքը, յերեկոս նու թրթուռնարն ու վոր-

մաղրի կախված ժուն:

Թելից կախված գլանաձև ձվից թրթուռը դուրս գալով՝ անմիջապես վայր չի ընկնում ներքեւ գտնվող թըրթուռների վրա, այլ մնում ե վորոշ ժամանակ ձվի թաղանթից կախված վիճակում: Այդ թաղանթը վորմնադրի թրթուռի համար մի առանցք թագըստոց ե. յերբ նա վորեւ վտանգի յեհանդիպությունը մեջ մնում այնտեղ այնքան, մինչև վտանգն անցնում ե, ճիշտ այնպես, ինչպես անում ե խխունջը, վորը վտանգի ժամանակ մտնում ե իր խեցիի մեջ: Ֆարըի դիտողությունները ցույց են տվել, վոր վորմնադրի նորելուկ թրթուռը թաղանթի մի-

Հից դուրս սողալով՝ կախվում ե ցած և հասնելով անդամակույժ թրթուռներին՝ զգուշությամբ մոտենում ե նրանցից մեկին և խածում նրա վորեւ մասը։ Անդամալույժ թրթուռը դրանից, իհարկե, ցավ ե զգում և այդ ցավի ազդեցության տակ հավաքում ե իր բոլոր ուժերը և սկսում թույլ շարժումներ կատարել, որինակ, գլուխը շարժել այս ու այն կողմը, մեջքը ուռցնել և այլն։ Վորմնադրի թրթուռն անմիջապես զգուշանում ե. նա յետ ե քաշվում, կծկվում և մտնում թաղանթի մեջ։ Քիչ անցած, յերբ անդամալույժ թրթուռի շարժումները դադարում են, նա նորից նույն յեղանակով դուրս ե գալիս թաղանթից և յերկրորդ հարվածը հասցնում։ Միքանի այդպիսի հարվածներից հետո անդամալույժն անշնչանում ե։ Այդ ժամանակ նա ազատ կերպով սկսում ե ուտել նրան։ Մի թրթուռն ուտելուց հետո նույնը կրկնում ե նա յերկրորդի հետ, բայց այժմ շատ ավելի համարձակ կերպով։ Յեվ այդ միանգամայն հասկանալի պատճառով։ Չե՞ վոր նա այժմ ավելի մեծ ե, ուժեղ, քան առաջ և մյուս կողմից ել անդամալույժ թրթուռները ժամանակի ընթացքում սովոր ու քաղցից այնքան են թուլացել, վոր այլևս չեն կարող վտանգավոր համարվել։ Այդ ձեռվ վորմնադրի թրթուռը մի յերկու թրթուռ ուտելուց հետո իրեն այնքան ուժեղ ե զգում, վոր այլևս կարիք չի զգում թաղանթի մեջ պատսպարվելու, դրա համար ել նրանից բաժանվում ե և ընկնում թրթուռների վրա ու սկսում ագահորեն խժոել նրանց։

Ֆաբրը նկատել ե նաև, վոր տնակների մեջ միշտ նույն թվով թրթուռներ չեն լինում. կան տնակներ, ուր լինում են ութ հատ թրթուռ, բայց կան տնակներ ել, ուր լինում են 16 հատ, ասել ե՝ ուղղակի կրկնապատիկը։ Պարզ ե, վոր 16 թրթուռ ունեցող տնակի մեջ վորմնադրի ձագն ավելի շատ պաշար ե ունենում, դրա համար ել ավելի շատ ե մեծանում, քան ութ թրթուռ պարունակող տնակների մեջ աճող վորմնադրները։

Բայց ի՞նչու տարբեր տնակներում տարբեր թվով թըրթուններ են լինում:

Դիտողությունները ցույց են տվել, վոր առատ պաշար ունեցող տնակներում զարգանում են եգ, իսկ մյուսներում՝ արու վորմաղիրներ։ Նշանակում ե, պաշար հավաքելու ժամանակ մայրն իմանում ե, թե ձվից դուրս յեկող ձագն արու յեկինելու, թե եգ և դրա համապատասխան ել պաշար ե հավաքում։ Յեվ իզուր չե նա այդպես անում։ Եգ վորմաղիրն, ինչպես տեսանք, հսկայական աշխատանք ե կատարում։ Իսկ ի՞նչ ե անում արուն։ Համարյա վոչինչ։ Ահա հենց դրա համար ել մայրն եղին ավելի շատ պաշար ե տալիս, վորպեսզի նա ամուր ու ուժեղ կազմվածք ունենա և կարողանա իրենից պահանջվող բոլոր աշխատանքները կատարել։

Վորմաղիրները ևս մյուս արհեստավոր կենդանիների նման իրենց աշխատանքները կատարում են բնագդորեն, առանց սովորելու։

ՀՅՈՒՍԵՐԸ

Հյուսներ շատ կան կենդանիների մեջ, բայց նրանց մեջ ամենայտնին փայտփորն ե կամ կտցահարը։ Սա իր արհեստի համար ունի միայն մի հատիկ գործիք։ այդ նրա կտուցն ե։ Վերջինս նրա համար և՛ դուր ե, և՛ կացին, և՛ մեխ. դրանով նա թե ծակում, թե փորում ե և թե կտրում։

Բայց ինչու համար ե ծակում, փորում, կտրում։ Պարզ ե. վոչ հաճույքի համար։ Բանն այն ե, վոր նա կերակրվում ե միջատներով, այն ևս գլխավորապես այնպիսի միջատներով, վորոնք ապրում են ծառերի կեղեկի տակ։ Ահա այդ միջատները դուրս հանելու համար ստիպված ե նա կեղել ծակել և փորել։ Յեկ այդ աշխատանքը կատարում ե նա ամենայն արագությամբ և ճարպիկությամբ։ Յերբ պետք ե կեղել ծակել, նա կտցով միքանի անգամ խփում ե կեղեին, և անհրաժեշտ անցքը պատրաստ ե։ Յեթե դիտենք նրա կտուցը, կտեսնենք, վոր նա կարծես թե հենց դրա համար ե շինված։ Նա յերկար ե, ուժեղ, ամուր և ունի կոնի ձև։ Այդ դեռ բավական չե։ Նրա գլուխը մեծ ե և ծանր։ Յեկ ուրիշ կերպ ել չեր կարող լինել. նրա մեծ և ուժեղ կտուցը չեր կարող մի փոքրիկ գլխի վրա հաստատվել։ Ուժեղ ե նաև նրա պարանոցը։ Այս ել հասկանալի յե՝ չե վոր նրա մեծ և ծանր դլուխը պահվում ե այդ պարանոցի վրա։ Շնորհիվ ծանը գլխի և ուժեղ պարանոցի՝ նրա հարվածներն առանձին ուժ են ստանում։ Պարանոցն ուժեղ լինելուց զատ, նաև կարճ ե։ Այս հանգամանքը ևս մեծ նշանակություն ունի։ Յերբ կամենում

Ենք կացնով շարունակ նույն տեղին խփել, բռնում ենք սովորաբար վոչ թե կոթի ծայրից, այլ գլխին մոտիկ մասից։ Պարանոցի կարճության պատճառով փայտփորը ևս հնարավորություն ե ստանում կտուցը շարունակ նույն տեղին խըփել և առաջին հարվածից առաջացած փոքրիկ անցքը հետըդհետե խորացնել։

Այս բոլորը շատ լավ։ բայց կամի հարց, վորին ամենից առաջ պետք ե պատասխանել։ Ի՞նչպես ե կանգնում փայտփորը ծառերի բների վըրա, վորոնք շատ անգամ ուղղաձիգ են լինում. չե՞ վոր թոշունների մեծ մասն այդպիսի տեղի վրա կանգնել չի կարող։ Փայտփորը դրա համար ունի առանձին հարմարություններ։ Յեթե դիտենք նրա մատները, իսկույն կտեսնենք, վոր նրանք նըման չեն սովորական թոշունների մատներին։ Վերջիններս հավերի նման ունեն վոտների վրա չորսական մատ, վորոնցից յերեքն ուղղված են դեպի առաջ, մեկը՝ դեպի յետ։ Մինչդեռ փայտփորի չորս մատներից յերկուսն ուղղված են դեպի առաջ և յերկուսը դեպի յետ։ Բացի դրանից, փայտփորի մատները յերկար են, ուժեղ և վերջանում են սուր և կեռ մագիլներով։ Բնի վրա կանգնած ժամանակ այդ մագիլները մտցնում ե կեղեկի վրա յեղած փոսիկները կամ դեմ ե առնում նրանցով անհարթություններին։ այդպիսով հաստատուն դիրք ընդու-



թոշունների մատներին։ Վերջիններս հավերի նման ունեն վոտների վրա չորսական մատ, վորոնցից յերեքն ուղղված են դեպի առաջ, մեկը՝ դեպի յետ։ Մինչդեռ փայտփորի չորս մատներից յերկուսն ուղղված են դեպի առաջ և յերկուսը դեպի յետ։ Բացի դրանից, փայտփորի մատները յերկար են, ուժեղ և վերջանում են սուր և կեռ մագիլներով։ Բնի վրա կանգնած ժամանակ այդ մագիլները մտցնում ե կեղեկի վրա յեղած փոսիկները կամ դեմ ե առնում նրանցով անհարթություններին։ այդպիսով հաստատուն դիրք ընդու-

նում բնի վրա։ Ասել ե, իր վոտներով բռնում ե նա վոչ մի-
այն առջեկի, այլ և յետեկի կողմից։ Փայտփորին այդ ժամա-
նակ ոգնում ե նաև պոչը։ Վերջինս ունի կարճ ու ամուր
փետուքներ։ Բնի վրա կանգնած ժամանակ նա ծռում ե պո-
չը և նրա փետուքների ծայրերը հենում բնի վրա յեղած ան-
հարթություններին։ Շնորհիվ այս հարմարությունների՝ նա
իրեն այնքան հաստատուն ե զգում բնի վրա, վոր շատ ան-
դամ բնի վրա կանգնած վիճակում քնում, հանգստանում ե։

Այժմ տեսնենք, թե ինչպես ե իմանում, վոր այս ինչ
կամ այն ինչ տեղը կեղեկի տակ միջատ կա։ Նա արագ կերպով
մազլցում ե ծառերի բները և դիտում ե նրանց բոլոր մասերը։
Հենց վոր վորեւ տեղ նրա համար կասկածելի յե թվում, ըս-
կըսում ե կտցով խփել։ Կտցի հարվածից առաջանում ե
ձայն։ իսկ այդ ձայնից իմանում ե նա, թե կեղեկի տակը փուչ
ե, թե վոչ։ Պատի մեջ յեղած դատարկ մասերը մենք ես կտ-
ըռղ ենք նույն յեղանակով գտնել, վորովհետև այդ մասերին
զարկելիս բոլորովին այլ ձայն ե առաջանում։ Յերբ փուչ տեղի
յե հանդիպում, նա սկսում ե այդ տեղը ծակել։ Բայց մի-
ջատը կարող ե այդտեղ չլինել։ Նա կեղեկի տակ իրեն համար
յերկար անցքեր ե փորում, ուրեմն կարող ե փայտփորի
ծակած տեղից հեռու գտնվել։ Ի՞նչպես ե վարվում այդ դեպ-
քում փայտփորը. գուցե նա ծակեր ե բաց անում միջատի
փորած անցքի յերկարությամբ և այդ ձևով վերջը գտնում
նրան։ Վոչ։ Նա դրա համար ել ունի հարմարություն։ Նը-
րա լեզուն բավական յերկար ե և բարակ։ Իր այս լեզուն մըտ-
ցընում ե բաց արած անցքի միջով կեղեկի տակ յեղած միջատ-
ների բները և այդպիսով գտնում միջատին։ Բայց միջատ
գտնելը դեռ բավական չե. պետք ե հանել նրան իր թագըս-
տյան տեղից։ Այստեղ ես նրա լեզուն ոգնության ե հասնում։
Բանն այն ե, վոր նրա լեզուն պատած ե կպչուն նյութով.
Դրա համար ել յերբ այդ լեզվով կպչում ե միջատին, այն

Ժամանակ վերջինս կպչում ե նրան, ճիշտ այնպես, ինչպես
սոսնձանյութով պատաժ թղթերին կպչում են ճանճերը։ Այդ-
պես կպչում են նրա լեզվին մանավանդ թրթուռները։ Իսկ
յեթե միջատը լեզվին չի կպչում, այդ դեպքում լեզվի ծայ-
րին դտնվող դեպի յետ դարձած փոքրիկ փշիկները մտցնում
ե միջատի մարմինը և այդպես բռնած դուրս քաշում անց-
քի միջից։

Բների վրա անցքեր բացելն այնքան ել դյուրին աշխա-
տանք չե. Նա փայտփորից խլում ե բավական մեծ յեռանդ.
կորցրած ուժերը կրկին ձեռք բերելու համար փայտփորն ըս-
տիպված ե շատակեր լինելու։ Այդ ե պատճառը, վոր մի
անցք փորելուց հետո սկսում ե նա անմիջապես փորել յերկ-
րորդ անցքը, ապա յերրորդը, չորրորդը, Մի խոսքով, ամբողջ
ժամանակը նա գործի վրա յե։ Յեկ ինչպես կարող ե նա
այդպես չլինել. չե վոր նրա գտածն ուրիշ բան չե, բայց յե-
թե մի փոքրիկ, աննշան միջատ, վոր յերբեք չի կարող փոր
կշտացնել։ Սակայն այդ փոքրիկ միջատներն ահագին, վնաս
են պատճառում ծառերին։ Փայտփորը, վոր այդչափ մեծ յե-
ռանդով վոչնչացնում ե այդ վնասակար միջատները, ուրեմն,
բավական ոգտակար գործ ե կատարում ծառերի համար։

Ծառերի բունը փայտփորի հարազատ միջավայրն ե. Ինչ-
պես վոր կերակուրն այդտեղ ե փնտոռում, այնպես ել այդ-
տեղ ե շինում նա իր բունը։ Բուն շինելու ժամանակ նա չա-
փազանց մեծ աշխատանք ե գործ դնում։ Հաճախ շինում ե
ծառի բնի մեջ կես արշին, յերբեմն ել մի արշին յերկարու-
թյուն ունեցող խորը և թեք գնացող անցք և ապա սրա ծայ-
րին ել բունը, վոր սովորաբար քառորդ արշին լայնություն
ե ունենում։ Յեկ այդ ամբողջ աշխատանքը կատարում ե նա
միայն կտցով։ Ծառ անդամ այդպիսի բուն շինելու համար
մարին և արուն աշխատում են յերկու ամբողջ շաբաթ։ Բնա-
տեղ մեծ մասամբ ընտրում են նրանք ծառերի բների վրա

յեղած փտած և փչացած մասերը։ Այդպիսի տեղեր ծառերի
բների վրա շատ են լինում։ Յերբ ուժեղ քամիներից կամ այլ
պատճառներից պոկվում ե ծառի ճյուղը, բնի վրա, ճյուղի
պոկված տեղում, առաջանում ե մի փոքրիկ փոս։ Անձրենե-
րի ժամանակ այդ փոսը լցվում ե ջրով. դրանից հետզհետե
ծառի փայտանյութն այդ մասում սկսում ե փտել։ Յերբեմն
ծառերի բնի վրա դուրս են գալիս սունկեր, վորոնք հե-
տըզհետե ծծում են բնի մեջ յեղած հյութերը։ Աշնանը, յերբ
այդ սունկերն ընկնում են, այն տեղերը, վորտեղ կպած են
յեղել նրանք, սկսում են կամաց-կամաց փտել։ Ահա հենց այդ-
պիսի տեղեր ե ընտրում փայտփորն իբրև բնատեղ։ Յեկ այդ
շատ հասկանալի յե. չե՞ վոր այդպիսի տեղերն ավելի հեշտ
ե փորել, քան անվաս մնացած մասերը։ Բուն շինելիս փայտ-
փորը հաճախ բնափայտից պոկում ե բավական մեծ տաշեղ-
ներ։ Յեկ այդ ահա թե ինչպես։ Կտցով նա վոչ միայն ծակում
ե, այլ և ճեղքեր ե բացում, ապա ճեղքի յերկու ծայրերը
կտրում ե և դուրս հանում փայտից խոշոր կտորներ։ Նը-
շանակում ե՝ նա կտցով կատարում ե այնպիսի աշխատանք,
ինչպիսին կատարում ենք սովորաբար մենք կացնով, դու-
րով և կամ սղոցով։ Այնտեղ, վորտեղ փայտփորը շինում ե իր
բունը, ծառի շուրջը կարելի յե տեսնել ահագին քանակու-
թյամբ տաշեղներ։ Բուն շինելուց հետո բնի հատակը հար-
թում ե նա և այդ այնպիսի խնամքով, վոր կարծես ուանդով
լինի հարթած։ Այնուհետև հատակի վրա փոռում ե փայ-
տի փոքրիկ և սղոցուքի նմանող մասնիկներ և այդպիսով շի-
նում ե ձվերի համար հարմար և փափուկ տեղեր։ Ինչպես
տեսնում եք, փայտփորն ամեն ինչ փայտից ե շինում։ Յեկ
ուրիշ կերպ չեր ել կարող լինել, քանի վոր այդ հյուսնը իր
ամբողջ կյանքում փայտի հետ ե գործունենում։ Նա ածում
ե 4—6 հատ ձու։ Զվերի վրա հերթով թուխս են նստում թե
մարին և թե արուն։ Զվերից դուրս յեկած ճուտերին ծնողնե-

ըը կերակրում են մեծ խնամքով և առատությամբ։ Շուտով
այդ ճուտերը մեծանում են և դուրս գալով բնից՝ սկսում են
ժագլցել ծառի բնի վրա։ Բուն շինելը կապված է չափա-
զանց մեծ աշխատանքների հետ, դրա համար ել փայտփորնե-
րը մի անգամ շինված բունը գործ են ածում բավական յեր-
կար տարիներ։ Հաճախ սերնդեսերունդ միևնույն բնի մեջ
են ձու ածում և թուխս նստում։

Փայտփորի միքանի տեսակները ձմեռը սովամահ չլինե-
լու համար պաշար են հավաքում։ Միջատներ, իհարկե,
հավաքել և պահել հնարավոր չե, դրա համար ել հավաքում
են պտուղներ, մեծ մասամբ կաղին։ Այդպես են անում,
որինակ, Ամերիկայում ապրող փայտփորի միքանի տեսակ-
ներ։ Մըանք կաղինն ամբարում են դարձյալ ծառերի բնի
մեջ։ Խոսք չկա, վոր այդտեղ ևս կտուցն ե, վոր ոգնության
ե հասնում։ Կտցով նրանք շինում են բնի մեջ փոքրիկ
անցքեր և յուրաքանչյուր անցքի մեջ մտցնում մի հատ կա-
ղին։ Զարմանալին այն ե, վոր այդ անցքերն այնքան նեղ են
շինում, վոր կաղինն ուժով ե ներս մտնում։ Մարդիկ այդ
անցքերից կաղինները դուրս հանելու համար անսպայման
պետք ե դիմեն բզի կամ այլ նման գործիքի ոգնության, մինչ-
դեռ փայտփորը պետք յեղած ժամանակ իր սուր և ամուր
կտցով ամենայն հեշտությամբ կաղինները դուրս ե հանում ի-
րենց տեղերից։ Յերբեմն փայտփորը նման անցքեր ե շինում
հեռագրասյուների վրա։ Պատահել են դեպքեր, վոր այդ անց-
քերն այնքան շատ են յեղել հեռագրասյուների վրա, վոր
վերջիններս ուժեղ քամիներին այլևս չեն կարողացել դիմանալ
և կոտրվել են։

Ամերիկայում ապրում ե փայտփորի մի տեսակ, վոր
պղնձի գույն ունենալու պատճառով կոչվում ե պղնձագույն
փայտփոր։ սա ևս պաշար ե հավաքում, բայց վոչ թե ձմեռ-
վա, այլ աժառվա համար։ Բանն այն ե, վոր այնտեղ, վոր-

տեղ վոր ապրում ե պղնձագույն փայտփորը, ամառը տեղի
յեն ունենում յերկարատև յերաշտներ։ Այս յերաշտների ժա-



Փայտփորը պաշար ե ամբարում նոռազրա-
սյունի մնջ.

մանակ չորանում ե ամեն ինչ
և կյանքը մեռնում ե ամե-
նուրեք. համարյա բոլոր թըռ-
չունները չփում են այլ յեր-
կըրներ. բայց պղնձագույն
փայտփորը մնում ե իր տեղը.
նա չվելու կարիք չի զգում:
Պատճառը պարզ ե. նա հա-
վաքել ե առատ պաշար, վոր
կարող ե իրեն լիուլի բավա-
րարել յերաշտի ամբողջ ըն-
թացքում։ Վորտեղ ե ամբա-
րում նա իր պաշարը։ Մի
ճանապարհորդ պատմում ե,
վոր ինքը մի անգամ ագա-
վա բույսի ցողունը կտրելիս
հանկարծ նկատել ե, վոր նրա

ներսում յեղող ամբողջ տարածությունը լցված ե կաղիններով։
Ահա հենց դա յե պղնձագույն փայտփորի շտեմարանը։ Յե-
րաշտի ժամանակ ագավա բույսի ցողունը չորանալով՝ սեղ-
մըվում ե, և նրա մեջ առաջանում ե վերեկց մինչև ներքե
մի պարապ տարածություն։ Պղնձագույն փայտփորն ամբա-
րում ե իր պաշարը հենց այդտեղ։ Յեկ այդ ահա թե ինչպես:
Նա ագավայի ներքեկի մասում մի կողքի վրա մի անցք ե բա-
նում և այդ անցքը հասցնում մինչև ներսի պարապ տարա-
ծությունը։ Այսուհետև բերում ե նա կաղինը և այդ անցքի
միջով ժամանում ներս. յերբ հասնում ե կաղինը պարապ տարա-
ծության, այդտեղ ծանրության ուժով ընկնում ե ցած։ Փայտ-

փորը դրանից հետո բերում ե յերկրորդ կաղինը և նույն ձեռվ
գցում պարապ տարածությունը։ Այդպես շարունակում ե նա
այնքան, մինչև վոր պարապ տարածությունը լցվում ե մինչև
անցքը։ Այնուհետև փայտփորը մի նոր անցք ե բանում
առաջինից քիչ վերև և նրա միջով նույն ձեռվ լցնում պարապ
տարածությունը։ Յերբ լցվում ե և այդ մասը, նա բանում ե
յերրորդ անցքը, ապա չորրորդը և այդպիսով ագավայի ցո-
ղունի ներսի ամբողջ տարածությունը, ներքեմ մինչև գա-
դաթը լցնում կաղինով։ Յերբեմն պատահում ե, վոր ագավա-
յի ցողունը լավ չորացած չի լինում, դրա համար ել նրա
ներսում լայն անցք չի բացվում. այդ դեպքում փայտփորն
ստիպված ե լինում ամեն մի կաղինի համար մի առանձին
անցք փորել. Ծանր ե այդ աշխատանքը, մանավանդ վոր նա
դրա համար կտցից զատ ուրիշ գործիք չունի, բայց աշխա-
տանքի առաջ ինչ կարող ե դիմանալ։ Իսկ մեր հյուսնը ծու-
լություն չդիտե։

իսկ այսուհետեւ առաջանալու և նշանակ առաջ պահանջ ուրիշ
առ և առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ

ՀԱԶԱՐՓԵՇԱԿԸ

Հազարփեշակը մկների, նապաստակների և սկյուռների
նման մի կրծող կենդանի յեւ Առաջները բավական տարած-
ված եր նա, բայց իր թանգագին մորթու պատճառով յեն-
թարկվելով սարսափելի հալածանքի՝ շատ ու շատ յերկրնե-
րում միանգամայն անհետացել եւ այժմ ապրում ե նա Սի-
բիրի, Հյուսիսային Ամերիկայի և շատ չնչին թվով նաև Յեփ-
րոպայի գետերի մոտ:

Նրան անվանում են կուղր, Մեր փոքրիկ կրծողների հա-



մեմատությամբ նա բավական խոշոր կենդանի յեւ հասունա-
ցած արու կուղրի յերկարությունը հասնում է 75-90 սան-
տիմետրի, պոչի յերկարությունը՝ 30 սանտիմետրի, բարձրու-
թյունը՝ դարձյալ նույնքան, իսկ ծանրությունը՝ 20-30 կիլո-
գրամմի: Մարմնի յետեի մասն ավելի հաստ եւ, քան առջևինը,

մեջքը կորացած, փորը կախված, պարանոցը կարճ և հաստ, գլուխը յետեի մասում լայն, առջևում սուր, դանդը տափակ: Վոտները կարճ են և չափազանց ուժեղ: Յամաքի վրանա շարժվում ե դանդաղ և անճարպիկ կերպով: Յեվ այդ միանգամայն հասկանալի պատճառով. նա իր կյանքի մեծ մասն անց ե կացնում ջրի մեջ, դրա համար ել շատ հարմարվել է ջրային, քան ցամաքային կյանքի: Յեվ իրոք. նրա յետեի վոտներն ավելի յերկար և ուժեղ են, քան առջևինները և, բացի դրանից, նրանց մատները միացած են միմյանց հետ լողաթաղանթով: Այդ վոտներընը նամար թիակների դեր են կատարում: Այդպես են և գորտի յետեի վոտները: Լիղալու ժամանակ նա ոգտվում ե նաև պոչից: Սա հիմքի մոտ գլանաձև ե, սովորական սլոզի նման, իսկ միջին մասում՝ տափակ թե վերեից և թե ներքեից և բավական լայն. լայնությունն այդտեղ հասնում է մոտ 20 սանտիմետրի. ծայրը փոքր ինչ կլոր ե, իսկ յեզրերը սուր: Կուղբի այդ տարորինակ պոչը համարյա մերկ ե, ծածկված փոքրիկ ձվաձև, դրեթե վեցանկյունի տափակ մաշկային թեփուկներով, վորոնց արանքից դուրս են ցցվում կարճ և հաստ մազեր: Իր այս տափակ և լայն պոչը արագ ու ճարպիկ կերպով ծըռելով այս ու այն կողմ, փոխում ե նա իր ուղղությունը ջրի մեջ: Նշանակում ե, պոչը նրա համար վոչ այլ ինչ ե, բայց յեթե մի դեկ:

Ականջսերը փոքր են ու կարճ և պատած թե ներսից, թե դրսից մազերով: Այդ ականջները հեշտությամբ ծռում և կաղնում ե նա գլխին, այնպես վոր լսողության անցքերը բոլորովին փակվում են: Հեշտությամբ փակվում են նաև նրա քթանցքները: Յերբ խորասուզվում ե նա ջրի մեջ, անմիջապես ծածկվում են թե քթի և թե ականջի անցքերը, դրա համար ել անվտանգ կերպով կարողանում ե նա մնալ ջրի տակ: Հաճախ մնում ե նա ջրի տակ ամբողջ 5, յերբեմն ել 7 և նույն իսկ 10 րոպե:

Նրա մարմինը պատած ե խիտ, փափուկ մետաքսանման
մազերով, վորոնց մեջ այս ու այն տեղ ցցվում են ամուր,
փայլուն և յերկար խողաններ։ Նրա այդ հագուստը մեջքի
կողմից մուգ ե, կարմրավուն շագանակագույն, իսկ փորի կող-
մից՝ բաց-գորշավուն. գեղեցիկ ու սքանչելի յե կուղբի մորթին.
Ճիշտ ե, այդ մորթին պաշտպանում ե նրան ցրտից, յերբ նա
գտնվում ե ջրից դուրս, բայց և միաժամանակ այդ մորթին
դարձել ե կուղբի դժբախտության գլխավոր պատճառը. մար-
դիկ նրա այդ գեղեցիկ հագուստը ձեռք բերելու համար ա-
մենաանողոք կերպով հալածում են նրան։ Յուրաքանչյուր
տարի ահագին քանակությամբ կուղբ ե վոչնչանում այդ մոր-
թու պատճառով, և գուցե գա մի որ, վոր այլևս կուղբ չկանչի
աշխարհիս յերեսն։

Հարմարված լինելով ջրային կյանքին՝ կուղբն իր բունը
շինում ե ջրի մեջ։

Բունը շինելու համար նա ամենից առաջ ջրի մեջ մի
հարթ տեղ ե ընտրում և ապա հողից, տղմից ու փոքրիկ քա-
րերից շինում ե նրա վրա մի շրջան. դա նրա տան հիմքն ե։
Այնուհետև բերում ե սուր ծայրեր ունեցող փայտյա ձողեր և
տնկում այդ հիմքի վրա. ստացվում ե վրանի նմանող նը-
րա տան կմախքը։ Յերբ կմախքը սլատրաստ ե, սկսում ե նա
բարակ ճիպոտներով հյուսել ձողերի արանքը։ Ինչքան ել
լավ հյուսելու լինի, այնուամենայնիվ, պարզ ե, վոր պետք
ե մնան անցքեր, վորոնց միջով ջուրը կարող ե ներս մտնել:
Վորպեսզի այդ տեղի չունենա, նա սկսում ե այդ փայտյա
հյուսվածքի թե դրսի և թե ներսի յերեսները ծեփել հողով
ու տղմով և ապա հարթ կերպով սվաղել։

Յեկ այդ ահա թե ինչպես։ Փայտյա հյուսվածքը պատ-
րաստելուց հետո նա ցեխ ու տիղմ ե բերում, ածում նրա վրա
և առջևի վոտներով տփտփում. դրանից հյուսվածքի արանք-
ները լցվում են, բայց մի մասն ել ներսի յերեսներից դուրս

Ե գալիս։ Այդ ժամանակ նա ներս ե մտնում և սկսում ե ծծված տիղմն ու ցեխը քսել ներսի յերեսներին։

Բայց տնակը դեռ պատրաստ չեւ Մի շերտ ծեփը չի կարող ապահովել նրա տունը ջրից։ Յեվ ահա նա բերում ե փոքրիկ ճյուղեր, տերեներ, փոռում պատերի վրա դրսից, մանավանդ կտրի վրա և նորից պատում նրանց յերեսը ցեխով ու տղմով ու կրկին լավ տփտփում։ Յեխ և տղմի մի մասը նորից ծծվում ե ներսից։ Նա այս անգամ ել մտնում ե ներս և ծծված մասերը քսում պատերին։ Այս յերկրորդ շերտով ել նա չի բավականանում։ Յեվ նրա վրա շինում ե յերբորդ շերտը, ապա չորրորդը և այդպես շարունակում այնքան, մինչև վոր ստացվում ե մի չափազանց հաստ ու ամուր պատ։ Այժմ նրա պատերի միջով այլևս ջուր ներս չի ծծվում։ Ճիշտ ե, հորդ անձրեների ժամանակ կարող ե նրա տնակի պատերի այս կամ այն մասը վնասվել, բայց կուղբը աչալուրջ կերպով հսկում ե տնակի վրա։ Հենց վորնկատում ե, վոր վորեն տեղից իր տնակին վտանգ ե սպառնում, անմիջապես սկսում ե նորոգել այդ մասը։

Բայց այդ դեռ բոլորը չեւ նրա տունը պետք ե ունենա և անցքեր, թե ներս ու դուրս անելու և թե պաշարը ներս բերելու համար։ Յեվ նա շինում ե յերկու անցք՝ մեկն իր համար, իսկ մյուսը պաշար ներս բերելու համար։ Առաջին անցքը վոլորուն եւ և խորը, իսկ յերկրորդը՝ ուղիղ։ Յեվ այդ միանգամայն հասկանալի յեւ նա կերակրվում ե թարմճյուղերով, կեղևով, հազվագյուտ դեպքում նաև փայտով։ Այդպիսի նյութերը վոլորուն անցքով չեր կարող նա ներս բերել։

Խնչպես տեսանք, բունը շինում ե նա փայտյա ձողերից, ճիպոտներից և ցեխից ու տղմից։ Այս վերջինները գետի մեջ հեշտությամբ կարելի յեւ գտնել, իսկ ինչ վերաբերում ե փայտյա ձողերին, սրանց ձեռք բերելն արդեն

այնքան ել հեշտ չեւ Մարդիկ ձողեր պատրաստելու համար գործ են ածում գործիքներ, որինակ, կացին, դանակ, սղոց և այլն: Կուղբը, սակայն, վոչ մի գործիք չունի: Նրա միակ գործիքը՝ ատամներն են: Սրանցով ենա կտրում ծառերը, սրում նրանց ծայրերը, կեղևահան անում: Այդ ատամները գտնվում են ծնոտների առջևի մասում և յուրաքանչյուրի վրա մի-մի զույգ: Դրանք չափազանց մեծ են, ուժեղ, սուր և ունեն թեք դիրք: բերանը փակած ժամանակ նրանք վոչ թե նստում են մեր ատամների պես միմյանց վրա, այլ անցնում են մեկը մյուսի վրայով: Այդ ատամները նրա համար նույն դերն են կատարում, ինչ վոր հյուսների համար դուրը:

Այժմ տեսնենք, թե նա ինչպես ե աշխատում: Ինչպես առհասարակ բոլոր կրծողները, կուղբը ևս գիշերային կենդանի յեւ ցերեկը քնում, հանգստանում ե, իսկ գիշերը դուրս ե գալիս աշխատելու կամ կերակուր փնտռելու: Հենց վոր արելը մայր ե մտնում, տեղից դուրս ե գալիս նա և մտնում անտառ. այստեղ նա վոչ թե փնտռում ե ընկած չորացած ճյուղեր կամ փայտ, այլ թարմ ու կանգուն թփեր ու ծառեր: Չորացած և կամ փտած բաների հետ նա գործ չունի: Ըստը մի փափուկ փայտանյութ ունեցող ծառ, անմիջապես գործի յեւ անցնում: Նստում ե յետևի վոտների վրա ծառի հիմքի մոտ, հենվում լայն ու տափակ պոչի վրա, գրկում տոջևի վոտներով ծառը և սկսում աշխատել ատամներով: Շուտով ծառի շուրջն առաջանում ե մի ակոս: Վերջինս քանի դնում, հետզհետեւ խորանում ե ու լայնանում: Ակոսի մի կողմը միշտ ավելի խորն ե լինում, քան մյուս կողմը: Յերբ ակոսը բավականաչափ խորանում ե, նա միքիչ հեռանում ե և այնտեղից հրում ծառը դեպի այն կողմը, վորտեղ ակոսն ավելի խոր ե փորված: Ծառը ճռճռալով կորանում ե և կոտըրվելով տապալվում: Կուղբն անմիջապես շտապում ե դեպի

գետը, այնտեղ ջրի մեջ մնում մի վորոշ ժամանակ և կրկին
դուրս գալով՝ մոտենում ե ընկած ծառին։ Դա անշուշտ մի
նախազգուշություն ե, չե՞ վոր ընկնող ծառի ձայնից կարող
են թշնամիներն իմանալ նրա տեղը և վնասել նրան։ Այժմ
սկսում ե ընկած ծառը քաշել տանել դեպի ջուրը։ Մի չափա-
զանց ծանր աշխատանք, Բայց կուղը դիտե իր դործը։ Նա
սկսում ե ընկած ծառը մասերի բաժանել, ապա այդ մասե-
րից հեռացնում ե ճյուղերը։ Յեվ այդ բոլորը կատարում ենա
տրագ ու ճարպիկ կերպով։ Մատի հաստություն ունեցող
ճյուղը կտրում ե միայն մի հարվածով։ Այժմ ունի նա փայ-
տի կտորներ և ճյուղեր։ Ճյուղերը տեղափոխում ե նա քաշե-
լով, իսկ փայտի կտորները՝ գլորելով։ Թե ճյուղերը քաշելու
և թե փայտի կտորները գլորելու համար անհրաժեշտ ե,
իհարկե, մի հարմար ճանապարհ. այլապես նրանք կարող են
դեմ ընկնել թփերին, կոճղերին և ծառերին։ Յեվ կուղը շի-
նում ե այդպիսի ճանապարհ. նա կտրում, հեռացնում ե բոլոր
թփերը, փոքրիկ ծառերը, հարթում ե հողի վրա անհարթու-
թյունները և պատրաստում այդպիսով հարմարավոր ճանա-
պարհ։ Ծառ ընտրելիս աշխատում ե, վոր նա այդ ճանապար-
հից շատ հեռու չլինի, ապա վայր ընկած ժամանակն ել ընկնի
ճանապարհի վրա։ Յեթե ծառը գետի անմիջապես կողքին ե
լինում, նա այնպես ե կտրում, վոր ընկնի գետի մեջ. դրա
համար նա գետին դարձած մասում ակոսն ավելի խոր ե
փորում։ Այդ բոլոր աշխատանքը կատարում ե նա միայն գի-
շերը։ հենց վոր սկսում ե լուսանալ, նա դադարեցնում ե
աշխատանքը և դնում քնելու կամ հանգստանալու, հետեւյալ
գիշերը, սակայն, նա դարձյալ իր աշխատանքի վրա յե։


Բուն պատրաստելը գեռ բավական չե։ այդ բունը շա-
րունակ յենթակա յե զանազան պատահարների։ չե՞ վոր գե-
տը կարող ե հորդանալ և կամ բոլորովին բարակել։ Հորդա-
ցած ժամանակ նա կարող ե ծածկել տունը և վնասել, իսկ

բարակած ժամանակն ել բունը կարող ե ջրից դռւրս մնալ: Անհրաժեշտ ե, ուրեմն, այնպես անել, վոր այդպիսի դեպքերում բունը պաշտպանված լինի: Դրա միակ միջոցն այն ե, վոր գետի ջուրը պահի նա միշտ միևնույն բարձրության վրա: Յեզ նա այդպես ել անում ե: Նա իր բնից ներքեւ շինում ե գետի ամրող լայնությամբ մի հողապատճեց: Սա արդեն չափազանց մեծ գործ ե և նրա անհատական ուժերից վեր: Բայց այդ գործում նա մենակ չի լինում: Հողապատճեցի վրա աշխատում են հարեան բների մեջ ապրող բոլոր կուղբերը: Յեզ այդ միանդամայն հասկանալի յե. հողապատճեցը պաշտպանելու յե նրանց բոլորի բները: Հողապատճեցը շինելու համար նրանք գետի լայնությամբ հատակի վրա հողից, տղմից և քարերից շինում են մի փոքրիկ բարձրություն. դա հողապատճեցի հիմքն ե. այնուհետև բերում են ձողեր և իրար կողք-կողքի տնկում: Այդ ժամանակ մեկը բերում ե ձողը, մյուսը տնկում ե հողի մեջ, յերրորդը ձողի հիմքի մոտ հավաքում հող ու տիղմ, ձողին ավելի հաստատուն դիրք տալու համար: Մի խոսքով, հավաքական աշխատանքը յեռուն կերպով առաջ ե գնում: Զողերը տնկելուց հետո ճիպոտներով սկսում են հյուսել նըրանց արանքները: Զուրը վորպեսզի կանգ առնի, լճանա, անհրաժեշտ ե, վոր հյուսվածքի բոլոր անցքերը փակվեն: Այդպես ել անում են. նրանք ցեխով ու տղմով փակում են այդ անցքերը: Բայց մի շերտով այդ անցքերը չեն կարող փակվել, դրա համար ել նրանք նորանոր շերտեր են ավելացնում յեղածի վրա: Նոր շերտ լինելու ժամանակ նրանք տերևոտ ձույղեր են բերում, վրա տալիս և ապա սրանց վրացեխ ու տիղմ ածում, հաճախ դնում են նրա վրա նաև ծանր քարեր: Խնչպես տեսնում ենք, հողապատճեցը շինում են նրանք այնպես, ինչպես տնակն են շինում: Տարբերությունն այն ե, վոր տընակը շինում են մի կամ յերկու հոգի, այսինքն մի եղ և մի ա-

դուռ, իսկ հողապատճեցը մի ամբողջ խումբ. բացի դրանից, հողապատճեցը շինվում եւ շատ ամուր կերպով։ Պատճառը պարզ ե. նա պետք եւ դիմանա ջրի ամբողջ հոսանքին։ Ցեղեցն գետն արագանում եւ, այն ժամանակ շինում են նրանք յերկու հողապատճեց, մեկը մյուսից վորոշ հեռավորության վրա։ Հողապատճեցի վրա ջրի համար շինում են անցքեր։

Ջրի հորդացման ժամանակ այդ անցքերը մեծացնում են, իսկ բարակացած ժամանակ, ընդհակառակը, փոքրացնում։ Տնակի նման հողապատճեցը ևս կարող եւ այս կամ այն պատճառից վնասվել, դրա համար ել նրանք միշտ աչալուրջ կերպով հսկում են և շարունակ նորոգում վնասված տեղերը։

Սակայն կուղբերը միայն տնակներ ու հողապատճեններ չեն շինում. նրանք յերբեմն շինում են և արհեստական փոքրիկ լճակներ և ջրանցքներ։ Ցեղ այդ ահա թե ինչու։ Մենք տեսանք, վոր կուղբերը ծառը կտրելուց և մասերի բաժանելուց հետո սկսում են տեղափոխել նրա մա-



Կուղբերը հողապատճեց են շինում, շետեվում յերեվում են նրանց վրանածնվ տնակները. ըստ ծառը կտրելուց և մասերի բաժանելուց հետո սկսում են տեղափոխել նրա մա-

սերը դեպի գետը ցամաքային ճանապարհով։ Ցամաքային ճանապարհն առհասարակ կապված եւ չափազանց շատ դժվարությունների և վտանգների հետ։ Այդ պատճառով ել նրանք շատ հաճախ շինում են արհեստական ջրային ճանապարհներ, վորովհետև այնպիսի ճանապարհներով փոխադրություններն ավելի հեշտ կերպով են կատարվում և, բացի դրանից, նրանց համար միանգամայն անվտանգ եւ ջրով անցնել, քանի վոր նրանք հրաշալի լուղորդներ են և գիտեն, թե այդտեղ ինչպես պետք եւ թշնամուց խուսափել:

Ջրային ճանապարհները շինում են նրանք այսպես։ Գետերի մեջ թափվում են գետակներ ու առուներ. հաճախ նրանք այդ գետակների և առուների առաջ շինում են բարձր հողապատճեններ. դրանից ջուրը կանգ եւ առնում, լճանում, տարածվում։ Այդ ժամանակ ջրի մակերեսույթը բավական բարձրանում եւ հաճախ հասնում այն վայրերին, վորտեղից կուղբերը պետք եւ փայտային նյութեր տեղափոխեն դեպի գետը։ Նշանակում ե, ջրային ճանապարհն արդեն պատրաստ ե. նրանք այդ նյութերը քաշում, դցում են ջրի մեջ և սրա միջով հեշտությամբ տանում այնտեղ, վորտեղ պետք եւ տանելին։

Յեթե անտառն այնպիսի տեղ եւ գտնվում, վոր այդ ձեռվով անհնարին ե ջրային ճանապարհ առաջ բերել, և կամ մոտակայքում առուներ ու գետակներ չկան, այդ դեպքում նրանք շինում են ջրանցքներ։ Մեր հյուսներն ու փայտահատներն այդ ժամանակ դառնում են հողփորներ և սկսում են իրենց առջևի վոտներով մի ծանր աշխատանք։ Նրանք փորում են մի ջրանցք, վոր սովորաբար ունենում ե մեկ և ես արշին լայնություն և մոտ մի արշին խորություն։ Այդ նցքը փորելիս հաճախ նրանք հանդիպում են դժվարուների, որինակ՝ արմատների, ծառերի, թփերի և մեծ քարերի ու ժայռերի։ Յերբ խոչընդուռը փայտային

նյութ ե, հեշտությամբ հաղթահարում են. Նրանց սուր ա-
տամներն անմիջապես գործի յեն անցնում և խոչընդոտը մեջ-
տեղից վերացնում, իսկ յեթե խոշոր քար կամ ժայռ ե ցըց-
վում նրանց առաջ, այդ դեպքում նրանց ամենակարող ա-
տամներն անդամ վոչինչ չեն կարող անել. Այդպիսի տեղե-
րում նրանք ջրանցքի ուղղությունը փոխում են. Նրանց
կյանքն ուսումնասիրող գիտնականներից մեկը պատմում է, վոր
յերբեմն կուղբերը շինում են՝ 70–80 սաժեն յերկարությամբ
ջրանցքներ. Ջրանցքներ մեծ մասամբ շինում են նրանք
հարթ տեղերում, վորովհետև փայտային նյութերը հենց այդ-
պիսի տեղերով ե դժվար տեղափոխել, մինչդեռ այդպիսի տե-
ղերում հեշտությամբ կարելի յե ջրանցքներ պատրաստել:
Ճիշտ ե, դա կապված ե մեծ աշխատանքի հետ, բայց կուղ-
բերն առհասարակ աշխատանքից չեն սարսափում: Ինչպես
հողապատնեշները, այնպես ել լճակներն ու ջրանցքները
կուղբերը պատրաստում են հավաքական ուժերով: Յեզ մի-
անդամայն հասկանալի պատճառով. չե վոր դրանք ել ընդ-
հանուր շահերին են ծառայում: Մի անդամ մեծ դժվարու-
թյուններով շինելով այդպիսի խոշոր գործեր, նրանք շատ
լավ գիտեն, վոր այնուհետև պետք ե ամեն որ ազատեն ի-
րենց ահազին աշխատանքից: Հաշիվը պարզ ե և հասկանալի:
Ինչպես տեսնում եք, կուղբերի տնակները և թե մյուս կա-
ռուցվածքները՝ հողապատնեշները, լճակներն ու ջրանցքները
կապված են շատ ծանր ու համառ աշխատանքի հետ: Յեզ
այդ ե պատճառը, վոր նրանք հեշտությամբ չեն թողնում
իրենց ընակավայրը: Ավելին: Միևնույն տնակը հաճախ ժա-
ռանդաբար անցնում ե սերունդե-սերունդ: Սակայն, ծնող-
ներից, պապերից կամ նախապապերից տնակներ ու զանա-
զան ոգտակար կառուցվածքներ ժառանդելով, նրանք ձեռք-
ները չեն ծալում և ոգտվում իրենց նախորդների թողած
բարիքներից: Վոչ, այդ ժառանդությունը կապված ե բազմա-

թիվ պարտականությունների հետո՝ Տնակները, ինչպես և
մյուս բոլոր կառուցվածքները, յենթակա յեն շարունակ ջրի
ավերիչ ազդեցության. յեթե նրանք ուշադիր կերպով հրս-
կողություն չունենան, այդ բոլոր կառուցվածքները հեշտու-
թյամբ կարող են ավերվել, փշանալու Ուրեմն, յեթե դրանք
չեն ավերվում, փշանում, պատճառն այն ե, վոր նրանք
շարունակ նորոգություններով չեն բավականանում. հաճախ պայ-
մանները, հանգամանքներն ստիպում են նրանց նոր ջրանցք-
ներ, լճակներ պատրաստել, և նրանք անմիջապես գործի յեն-
անցնում, առանց աշխատանքի մեծությունից ու ծանրու-
թյունից սարսափելու:

Կուղբերին շատերն անվանում են հազարփեշակ։ Մի-
անգամայն հարմար անուն։ Յեվ իրոք, նրանց ձեռքից ինչ
ասես, վոր չի դալիս։ Նրանք, ինչպես տեսանք, հրաշալի-
կերպով փայտահատներ են, հյուսներ են, ծեփողներ են, ապա-
նույնչափ հաջող հողփորներ են և, վոր գլխավորն ե, հրա-
շալի ճարտարապետներ են, գիտեն, թե ինչպես պետք ե շի-
նել հողապատնեշները, ջրանցքները և լճակները։ Բայց վոր-
տեղ և յե՞րբ են սովորում նրանք այդ բոլորը։ — Վոչ մի տեղ։
Նրանք այդ արհեստները գիտեն առանց սովորելու։ Նրանք
այդ բոլորը կատարում են բնագդաբար, ճիշտ այնպես, ինչ-
պես շերամն իր բոժոժն ե հյուսում, սարդն իր վոստայնը, և
կամ ծիծեռնակն իր բունն ե ծեփում, առանց սովորելու,
նույնիսկ առանց տեսնելու, թե ինչպես են անում այդ ու-
րիշները։

ԿՈՒՅՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԸ

Կենդանիների մեջ վոչ մեկն այնպիսի բարդ բուն չի շինում, ինչպես տերմիտները, վորոնց անվանում են նաև սպիտակ մըջյուններ։ Սրանց բունը հաճախ ունենում է $2\frac{1}{2}$ կամ 3 սաժեն բարձրություն, հիմքը դարձյալ նույնքան և դրսից նմանում է մի մեծ բլրի։ Դա մի հսկայական շենք է, մանավանդ յերբ ի նկատի յենք ունենում նրա կառուցող փոքրիկ կենդանիները, վորոնց յերկարությունը հազիվ կես մատնաշափի յե հասնում։ Ցեզ իրոք, տերմիտն իր շինած ընի մոտ մի վողորմելի թզուկ է. յեթե համեմատենք բունը նրա մարմնի հետ, կտեսնենք, վոր բունը նրա մարմնից մոտ հազար անգամ ավելի բարձր է։ Ամենաբարձր շենքը, վոր ամենահայտնի ճարտարապետները շինել են մինչև այժմ, 150 սաժենից ավելի չի յեղել, իսկ 150 սաժենը մարդու հասակից անի՞ անգամ է բարձր. — պարզ է, վոչ ավելի քան 170 կամ 75 անգամ։ Հազար անգամ ավելի բարձր շինություն շինելու համար մարդիկ պետք է կառուցեն մոտավորապես 2 վոստ բարձրություն ունեցող շենք։ Այսպիսի շենք գեռես վո մի ժամանակ և վոչ մի տեղ չեն շինել։

Սակայն տերմիտների բունը միայն բարձրությամբ չե աչի ընկնում, այլ և ամրությամբ։ Նրա ընի վրա ազատ կերպվ կարող են բարձրանալ միաժամանակ 5 մարդ, և բունը ունից վոչ մի վնաս չի ստանալ։ Ավելին, նրա ընի վրա ազա կերպով կարող են բարձրանալ նաև գոմեշները և, վոր

ավելի դարմանալի յե, փղերը, վորոնց ծանրությունը հասնում է 70-80 գիթի։ Գիտնականներն ուսումնասիրելու համար հաճախ քանդել են նրանց բները և նկատել, վոր յերեք բանվոր ծանր քլունգներով և բահերով աշխատելով միքանի ժամում հազիվ են կարողանում քանդել այդ բները։

Ամեն մի բնի մեջ ապրում են միլիոնավոր տերմիտներ։ Բայց դրանք բոլորը միայն մի ընտանիքի անդամներ են։ Յուրաքանչյուր բնի մեջ լինում է մի մայր և մի հայր, ապա անթիվ-անհամար զավակներ։ Այդ զավակների մի մասը կոչվում են աշխատավորներ, մյուսները զինվորներ։ Աշխատավորներն ամենափոքրիկ տերմիտներն են բնի մեջ։ Դրանք իրենց ամբողջ կյանքն աշխատանքի մեջ են անցկացնում, և իզուր չեն նրանց անվանում աշխատավորներ։ Դրանք են բունը շինում, նորոգում։ Բայց դրանով չի սպառվում նրանց աշխատանքը։ Նրանք են և կերակուր գտնողները։ Փոքրիկ թրթուռները, վորոնց թիվը հարյուր հազարներով պետք են հաշվել, ապա զինվորները, վերջապես հայրն ու մայրը յերբեք կերակրի հոգս չեն քաշում։ Այդ հոգսն ամբողջովին ծանրացած են աշխատավորների վրա։ Բացի դրանից, նրանք են մանուկ սերնդի պահողը, խնամողը մեծացնողը։ Յեվ այդ են պատճառը, վոր բնի մեջ աշխատողներն աչքի յեն ընկնում իրենց շատությամբ։ Յեվ ուրիշ կերպ ել չեր կարող լինել։ Հետո մեծ աշխատանքը պահանջում է ավելի մեծ թվուաշխատավոր ձեռքեր։

Թվի կողմից յերկրորդ տեղը բռնում են զինվորներ։ Արանք ավելի մեծ են, քան աշխատավորները և ունեն ահագին գլուխներ։ Նրանց գլուխը կազմում է ուղիղ մարքի կեսը և ունեն հսկայական ծնոտներ, վորոնք սովորաբար թխի կիսի չափ յերկարություն են ունենում։ Զինվորները պաշտպանում են բռնը զանազան թշնամիներից։ Հենցվոր վորեւ կողմից վտանգ է սպառնում, զինվորներն անմիջապես

ուղղվում են դեպի այն կողմը և իրենց ուժեղ ծնոտներով
աներկյուղ կերպով պաշտպանում բռնը:

Աշխատավորներն եգեր են, իսկ զինվորներն արուներ,
քայց յերբեք սերունդ չեն առաջ բերում: Սերունդ առաջեն
բերում բնի մեջ միայն յերկուսը, այն եւ հայրը և մայրը:
Հայրը զինվորներից փոքր ինչ մեծ եւ լինում, իսկ մայրը
շատ ավելի մեծ, քան հայրը: Մայրը հոր հետ միասին ապ-
րում եւ մի սենյակում և շարունակ ձու յեւ ածում:

Այժմ տեսնենք, թե մեր ճարտարապետներն ինչպես են
շինում իրենց բռնը:

Բունը շինում են նրանք կավից և բռն շինելու ժամա-
նակ մտնում են հողի տակ և այնպես աշխատում: Շինա-
նյութի համար այս ու այնտեղ ընկնելու կարիք չունեն. հար-
կավոր կավը վերցնում են նրանք ներքենից և կառուցում
բռնը: Կավից սկզբում շինում են նրանք յերկու հատ սրա-
ծայր աշտարակներ, ապա այդ աշտարակների միջև յեղած
տարածության մեջ շինում են բազմաթիվ սենյակներ. այդ-
պիսով աշտարակների արանքը հետզհետեւ լցվում ե, վերջը
աշտարակների ծայրերը անհետանում են, և առաջանում ե
խոտի դեղի նման մի բարձր բլուր:

Բլրի կողքերը, այսինքն՝ բլրի արտաքին պատերը չա-
փազանց հաստ են. վերևում նրա հաստությունը հասնում է
 $1\frac{1}{2}$ -ից մինչև 2 արշինի, իսկ ներքեռում՝ մինչև $2\frac{1}{2}$ արշինի:
Այդ պատերը շինվում են կավից. կավը նրանք խառնում են
թռչքի հետ, դրանից կավն ամրանում եւ և դառնում աղյուսի
նման մի զանգված: Այդ պատի միջով ամենայն ուղղու-
թյամբ անցնում են միջանցքներ, վորոնցով բնի զանազան
մասերը կապակցվում են միմյանց հետ: Միջանցքների մի
մասը գնում է դեպի հողի խորքը. այդ միջանցքներով տեր-
միտները ներքենից կավի մասնիկներ են հանում վերև և նը-
րանով կառուցում բնի այս կամ այն մասը: Պատի միջով

անցնում են նաև մի շարք այլ անցքեր դեպի ցած։ Այդ
անցքերը շինվում են հատկապես ջրի համար։ Ճիշտ ե, բնի
պատերն, ինչպես տեսանք, ամուր են, բայց քանի վոր նը-
րանք շինվում են կավից, ուրեմն միշտ վտանգ կա, վոր
այս կամ այնտեղ բացված ճեղքից կարող ե ջուրը ներս
մտնել և վողողել ներսի սենյակները. դրա համար ել շինվում
են այդ անցքերը։ Սրանով ներս մտած ջուրը հոսում ե ներքև
և գնում հողի խորքը։

Այժմ ծանոթանանք բնի ներսի հետ։ Նա բաղկացած ե
միքանի հարկերից։ Վերին հարկը, վոր գտնվում ե գագաթի
անմիջապես տակը, բաղկացած ե մի մեծ և ընդարձակ սենյա-
կից։ Այդտեղ վոչ վոք չի ապրում. դա պաշտպանում ե բնի
ներսի տարածությունը դրսի ուժեղ ցրտերից և շոգերից։
Յերբ արևը տաքացնում ե բնի գագաթը, տաքությունն այդ
հարկի միջով չի անցնում ներքև, վորովհետև այնտեղ ոդ ե
գտնվում, իսկ ոդն, ինչպես հայտնի յե, տաքության վատ
հաղորդիչ ե։ Այդ նույն ոդը թույլ չի տալիս, վոր ցրտերի
ժամանակ բնի ներսի տաքությունը դուրս գա. Այստեղ բնի
ներսը վոչ շատ տաքանում ե և վոչ ել շատ ցրտում։

Այժմ անցնենք բնի մյուս հարկերին։ Լավ ե սկսենք
ամենացածը հարկից։ Այս հարկը գտնվում ե նկուղների վե-
րեռում, բայց անպայման գետնի մակերեսութից վերև և ամ-
բողջ բնի մեջ ամենամեծ հարկն ե. Նրա ուղիղ մեջտեղում
գտնվում ե մի մեծ ու ընդարձակ սենյակ, վորի յերկարու-
թյունը լինում ե կես արշին, յերբեմն ել ավելի։ Հատակը
հարթ, ուղիղ, իսկ առաստաղը՝ կամարաձև։ Պատերը հաստ
ու ամուր և միացած շրջապատի սենյակների հետ բազմա-
թիվ անցքերով։ Այս սենյակը բնի ամենամեծ և ամենալավ
սենյակն ե. Այդտեղ են ապրում մայրն ու հայրը։ Սենյակի
ուղիղ մեջտեղում գտնվում ե մայրը, նրա կողքին հայրը,
իսկ շուրջը վլստում են ահագին քանակությամբ աշխատա-

վորներ, սրանց շուրջն ել իրարից հավասար հեռավորության
վրա շարված են զինվորները, գլուխները դարձրած դեպի դուր-
ուը։ Այս սենյակի շուրջը գտնվում են բազմաթիվ մեծ ու
փոքր սենյակներ, վորտեղ ապ-
րում են աշխատավորները, զին-
վորները։ Բացի այդ սենյակնե-
րից, այդ հարկի շուրջը, բնի
պատերին կից գտնվում են և
բազմաթիվ շտեմարաններ, վոր-
տեղ ամբարում են տերմիտներն
իրենց պաշարը։


Տերմիտների տան կտրվածքը.
յերեվում են բուլոր հարկերը.



Այս հարկի վրա գտնվում ե
յերկրորդ հարկը. սա բաղկացած ե
միայն մի հատ սենյակից, լավ ե
ասել՝ դահլիճից, լայն ու ընդարձակ։ Նրա մեջ կան բազմաթիվ
գլանաձևուսւղղաձիգ սյուներ, մոտ $1\frac{1}{2}$ արշին բարձրությունը։
Այդ հսկայական դահլիճը դատարկ է, վոչ վոք այնտեղ չի
ապրում։ Այդտեղով տերմիտները միայն անցուղարձ են ա-
նում, այն եւ ներքեի հարկից գնում են վերև և կամ վերեից
ցած են իջնում, դեպի ներքեի հարկ։ Բայց, իհարկե, պարզ
է, վոր այդ հսկա դահլիճը միայն դրա համար չի շինվում։
Տերմիտների կյանքն ուսումնասիրող գիտնականներից շա-
տերն այն կարծիքին են, վոր այդ դահլիճը շինվում ե բնի
ոդի քանակությունը շատացնելու համար։ Յեվ իրավ, առա-
ջին հարկում, ինչպես տեսանք, ապրում են ահագին թվով
տերմիտներ։ յեթե նույնքան տերմիտներ ապրեյին և այդ
հարկում, այն ժամանակ բնի մեջ ոդը սարսափելի ծանր
կլիներ։

Այս հարկի հաստ ու ամուր սյուների վրա պահպանվում
ե յերրորդ հարկը. սա բնի ամենախիտ բնակչություն ունե-
ցող հարկն եւ հարյուր հազարավոր տերմիտներ են ապրում

արդտեղ։ Դա մի մեծ և ընդարձակ մանկանոց է. այդտեղ են անցկացնում տերմիտներն իրենց մանկությունը։ Այդ հարկի մեջ կան մի շարք մեծ միջանցքներ և ապա անթիվ, անհամար փոքրիկ խցիկներ։ Վերջիններս փայտից են շինվում, մինչդեռ, բնի մնացած մասերը կավից կամ առհասարակ հողից։ Խցիկները շինելու համար աշխատավոր տերմիտները



Տերմիտների մայրը յեվ հայրը, շուրջը աշխատավորները յեվ ապա գինվորները։ Կրծում են փայտը, պոկում մանրիկ մասնիկները և ապա այս մասնիկները խառնելով թքի հետ՝ պատրաստում բարակ տախտակներ, վորոնցից և շինում են խցիկները։ Այս հարկը վերևից ծածկված է հաստ առաստաղով, վորի մեջ կան բազմաթիվ անցքեր։ Վերջիններիս միջոցով մանկանոցը հարաբե-

բության մեջ և մտնում ամենավերին հարկի հետ, վորը
բաղկացած է, ինչպես տեսանք, մի մեծ և ընդարձակ սե-
նյակից:

Այս բոլորից տեսնում ենք, վոր տերմիտների բունն ու-
նի միանդամայն նպատակահարմար կազմություն. նա թե
ամուր է, թե ողառատ և թե պաշտպանված և միաժամա-
նակ ուժեղ շոգերից ու ցըտից:

Տերմիտների ընի մեջ կան բազմաթիվ շտեմարաններ.
Դրանք գտնվում են դրսի պատերին կից և միացած են մի-
մյանց հետ անցքերով. Վորոշ ձև չունեն շտեմարանները.
Ընի մի մասում նրանք կլոր են, մի այլ մասում՝ յերկարա-
վուն, անկյունավոր և կամ բոլորովին զուրկ վորեւե կանոնա-
րոր ձևից. Տերմիտներն ամենակեր են, բայց գլխավորապես
ուտում են բուսական խեժ, թանձրացած նյութ, փայտ և
այլն: Դրա համար ել ամբարում են իրենց շտեմարաններում
այդպիսի նյութեր: Փայտը, խեժը և այլն նրանք մանրում,
փոշիացնում են և այնպես լցնում շտեմարանները: Այդ պա-
շարով աշխատավորները կերակրում են մորը, հորը, զինվոր-
ներին, նույնպես և թրթուռներին: Դիտողությունները ցույց
են տվել, վոր մանկանոցի բարակ փայտյա պատերը խոնա-
վության ու տաքության շնորհիվ շուտով ծածկվում են բոր-
բոսով. շատերի կարծիքով տերմիտների թրթուռներն սկըզ-
բում կերակրվում են հենց այդ բորբոսով: Տերմիտները կույր
են և առհասարակ լույս չեն սիրում. դրա համար ել աշխա-
տում են մնալ մթության մեջ: Կերակուր փնտոելու
համար անգամ լույս աշխարհ չեն դուրս գալիս: Նրանք ի-
րենց ընից ստորերկրյա ճանապարհներ են շինում դեպի
զանազան կողմեր և նրանցով անցուղարձ անում: Յեթե
այդպիսի ճանապարհներ շինելու ժամանակ հանդիպում են
ժայռի, նրանք կանգ չեն առնում և շարունակում են իրենց
ճանապարհը ժայռի վրայով, շինելով կազից ու հողի մաս-

նիկներից խողովակներ։ Այդ ճանապարհները հասցնում են նրանք այն առարկաներին, վորոնցով սնվում են, որինակ, ծառերի, ընկած կոճղերի, փայտյա զանազան առարկաների և այլն։ Բայց այդտեղ ևս նրանք աշխատում են մթության մեջ։

Մի գիտնական պատմում եր, վոր տերմիտները հաճախ մուտք են գործում և մարդկային բնակարանները և այնտեղ ուտում կարասիները։ Սակայն դրա համար նրանք ծակում են հատակը և մտնում կարասիի մեջ աննկատելի կերպով։ որինակ, սեղանի մեջ մտնելու համար նրանք ծակում են հատակը հենց այնտեղ, վորտեղ գտնվում ե սեղանի վոտքը։ Ներս մտնելով սեղանի վոտքի մեջ ներքեցից՝ սկսում են նրանք խժոել փայտանյութը, առանց դրսի շերտին ձեռք տալու, այնպես վոր դրսից թվում ե, թե սեղանի վոտքն անվնաս ե. այդպիսի վոտքը, հասկանալի յե, վոր այնուհետև հեշտությամբ կոտրվում ե։ Կոտրվելուց հետո յերեսում ե, վոր ներսն ամբողջովին կերպած ե և անվնաս մնացել ե միայն մի շատ բարակ շերտ։ Յեթե սեղանի վրա դրված են լինում մրգեր, տերմիտները նույն ձեռք սկսում են խժոել և այդ մրգերը։ Նրանք մտնում են մրգերի մեջ այն մասերից, վորտեղ մրգերը կպչում են սեղանի մակերեսույթին։ Յեվ այդ միանգամայն հասկանալի պատճառով։ Եթե նրանք անցքը բաց անելին կողքից, այն ժամանակ լույս կմտներ ներս, իսկ լույսից նրանք, ինչպես տեսանք, խուսափում են։

Միևնույն գիտնականը պատմում է հետեւյալը.

«Մի սենյակում,—ասում ենա,—կարուտելեղենով լիքը մի քսակ։ հատակը, վորի վրա դրված եր այդ քսակը, շինչված եր չափազանց ամուր նյութից, այնպես վոր տերմիտները հատակը չելին կարող ծակել, բայց չնայած դրան, այդ ուտելեղենը վերջը տերմիտների բաժին ե. դառնում։ Յեվ այդ ահա թե ինչպես։ Տերմիտներն առաստաղը ծակում են

ուղիղ քսակի ուղղությամբ և բացված անցքից մի խողովակ շինում դեպի քսակը։ Այնուհետև այդ խողովակով նրանք ապահով կերպով սկսում են անց ու դարձ անել։ Վերջը նկատելով, վոր այդ ուղիղ դեպի ցած իջնող խողովակով դժվար ե վեր ու վար անել, նրանք շինում են մի այլ խողովակ, վոր վոլորուն կերպով փաթաթվում ե առաջին խողովակի շուրջը։ Ահա այս վերջին խողովակով նրանք հեշտությամբ կարողանում են քսակի մեջ գտնված ուտելեղենը կրել իրենց շտեմարանները։

Ցույց տալու համար, թե ինչպես տերմիտներն իրենց աշխատանքի ժամանակ կարողանում են խուսափել վտանգներից, մի այլ գիտնական պատմում ե նրանց կյանքից մի ուրիշ դեպի։ «Տերմիտները,—ասում ե նա,—մտնելով մի մառան՝ ուտում են շաքարի բերանին գտնվող խցանները, բայց այնպես, վոր վոչ մի խցան չի ծակվում. ասել ե, խցաններից մնում են բարակ շերտեր։ Ցեթեն նրանք խցանն ուտեյին մինչև վերջը, հասկանալի յե, վոր գինին դուրս կթափվեր և նրանց կխեղդեր»։

Ցեվ այդ բոլորը կատարում են այդ փոքրիկ կույր միջատները։ Այժմ տեսնենք, թե ինչպես են բազմանում նրանք։

Ինչպես տեսանք, ներքեւի հարկի մեջտեղում գտնվող մի մեծ սենյակում ապրում են հայրն ու մայրը բազմաթիվ աշխատավորներով և զինվորներով շրջապատված։ Աշխատավորներն իրենց գտած ամենալավ ու ամենահամեղ կերակուրը հրամցնում են մորը և սա առատ սնունդ ստանալով՝ հետզհետե մեծանում ե՝ և մեծանում ե փորիկի կողմից, այնպես վոր վերջն յերկու, նույնիսկ յերեք հաղար անգամ ավելի մեծ ծավալ ե ընդունում, քան առաջ եր։ Բայց մայրն անգործ չի. նա շարունակ ձու յե ածում։ Դիտողությունները ցույց են տվել, վոր նա ամեն մի բուլեյում ածում ե 50 ձու. ասել ե՝ մոտավորապես յուրաքանչյուր վայրկյանում մի հատ

ձու: Այս հաշվով նա մի ժամում ածում է 3000, իսկ մի որում 72,000 ձու: Աշխատավորները, վորոնք շրջապատում են նրան, ածված ձվերն անմիջապես առնում, տանում են մանկանոցը. այնտեղ նրանցից դուրս են գալիս փոքրիկ թըրթուոներ, վորոնց այնուհետև նրանք ամենայն խնամքով պահում, մեծացնում են: Նշանակում ե, ամեն որ տերմիտների բնի բնակիչների թիվն աճում ե տասնյակ հազարներով: Վորքան ել այդ բնակիչները փոքր լինեն և բունը մեծ, այնուամենայնիվ վերջն այդ բունը չպետք ե կարողանա տեղավորել բոլորին: Ահա հենց այդ պատճառով ել ժամանակ առ ժամանակ բնից դուրս են գալիս ահազին քանակությամբ տերմիտներ, վորոնք գնում են նոր տուն ու տեղ դնելու: Նրանք դուրս են գալիս սովորաբար կամ վաղ առավոաները և կամ գիշերները: Բնից դուրս գալուց հետո, նրանք շնորհիվ իրենց յերկար թևերի՝ թռչում, բարձրանում են ողի մեջ և վորոշ ժամանակ խաղում այնտեղ: Ճրագիլույսն այդ ժամանակ նրանց շատ ե գրավում, ճիշտ այնպես, ինչպես գրավում ե և մյուս գիշերային թևավոր միջատներին, և նրանք գլխապատճռ թռչում են դեպի լույսը և թափվում ճրագի վրա, թափվում են հազարներով ու տասնյակ հազարներով: Այդպիսի դեպքերում սովորաբար ճրագը հանդչում ե նրանց դիակների տակ: Այդ պես նրանք միքանի ժամ մնում են ողի մեջ, դա նրանց առաջին, բայց և վերջին թռիչքն ե լինում: Այնուհետև նըրանք ցած են իջնում, այստեղ նրանց թևերը կտրվում, ընկնում են, և դառնում են թևազուրկ եյակներ: Այդ թռիչքի ժամանակ նրանց հետևում են բազմաթիվ թշնամիներ: Հազարներով ու տասնյակ հազարներով նրանք վոչնչանում են: Այդ դեռ բավական չե: յերբ նրանք իջնում են, այնտեղ ևս մըջյունները, միջատները, գորտերը, թռչունները և զանազան տեսակի կենդանիներ նրանց հանգիստ չեն տալիս: Ամենքը վրա պրծած լափում են և այնքան, ինչքան հնարավոր

Ե: Այսպիսով նրանց մեծ մասը վոչնչանում ե և միայն միանալը ան մասը թագնվելով խոտերի մեջ, տերևների տակ և կամ մամուռի մեջ՝ կարողանում ե ազատվել։ Այդ ժամանակ մոտակայքում գտնվող տերմիտների բներից դուրս են գալիս աշխատավորները և շինելով կավե փոքրիկ խցիկ՝ բանտարկում են այնտեղ մի հատ եգ և մի հատ արու և ապա սկսում խնամել և կերակրել նրանց։ Այդ փոքրիկ խցիկը դառնում ե այնուհետեւ նոր բնի հիմքը։ Բանտարկված արուն ու եզն այլես դուրս չեն գալիս այդտեղից և չեն ել կարող դուրս գալ, վորովհետեւ խցիկի անցքերը չափազանց փոքր են նրանց համար։ Հետզհետեւ այդ խցիկն աշխատավորները լայնացնում և մեծացնում են և դարձնում այնպիսի ընդարձակ սենյակ, ինչպիսին լինում ե սովորական բնի մեջ առաջին հարկում։

Այժմ տեսնենք, թե ինչ են անում զինվորները բնի մեջ։

Զինվորներն, ինչպես անունն ել ցույց ե տալիս, բունը պաշտպանում են զանազան թշնամիներից։ Յերբ քանդելու դիտավորությամբ սկսում են քլունգով հարվածել բնի պ ստերին, անմիջապես վնասված տեղերում յերեսում են զինվորները՝ հազարներով, վորոնք իրենց ծանր ու մեծ զլուխն առաջ ցցած և ծնոտները լայն բաց արած՝ հարձակվում են բունն ավերողի վրա։ Յեթե հաջողվում ե մոտենալ թշնամուն, ապա նրանք իրենց ծնոտները խորը խըռում են նրամարմնի մեջ։ Վոչ մի ուժով այնուհետեւ հնարավոր չի լինում պոկել, հեռացնել նրանց. ավելի շուտ պոկվում ե նըրանց վոտը, քան ծնոտները դուրս են գալիս թշնամու մարմնից։ Յեթե սկսում են ջարդել նրանց, ապա ընկածներին փոխարինում են նորերը և բոլորն ամենայն անձնագոհությամբ աշխատում են պաշտպանել իրենց հայրենի բունը. իսկ յեթե դադարում են քանդելուց, այն ժամանակ միքիչ ըստասելուց հետո զինվորները հեռանում են և մտնում իրենց սենյակները, իսկ նրանց տեղը յերեսում են աշխատավորնե-

ըլ, հազարներով, տասնյակ հազարներով, վորոնք բոլորն եւ
մի-մի փոքրիկ կտոր հող կամ կավ վերցրած, գալիս են ընի-
վասված մասը նորոգելու: Ամենայն կարգապահությամբ և
արագությամբ նրանք նորոգությունն առաջ են տանում: Այդ
ժամանակ նրանց մեջ յերեսում են միայն միքանի հատ զին-
վորներ, վորոնք առանց ձեռք տալու նորոգության նյութերին՝
դանդաղ կերպով այս ու այն կողմն են շարժվում. նրանցից
մեկը կանգնում ե վնասված մասի ամենակարեռ կետում և
շարունակ կամացուկ կերպով փոխում իր դիրքը, յերբեմն-յեր-
բեմն նա իր ծանր գլուխը բարձրացնում եւ ծնոտներով խփում
գետնին: Այդ հարգածից առաջանում եմի ծայն, վոր վորոշ հե-
ռավորության վրա անդամ լսելի յեւ լինում: Այդ ծայնից հե-
տո լսվում ե ինչ-վոր մի շըշյուն, ինչպես յերեսում ե, այդ
ծայնն առաջ են բերում աշխատավորները փորը գետնին
քսելով: Ամեն անգամ, յերը զինվորը զիխով զարկում ե գետ-
նին, աշխատավորներն սկսում են ավելի յեռանդով ու վո-
գերությամբ աշխատել: Զարմանալին այն ե, վոր տաս-
նյակ հազարներով միասին աշխատելով, նրանք յերբեք մեկը
մյուսին չեն խանգարում: Այդպես աշխատանքն առաջ են
տանում, մինչև վոր ավարտվում ե նորոգությունը. իսկ յե-
թե այդ ժամանակ նորից սկսում են ըլունգի հարգածներ ի-
ջեցնել ընի վրա, կայծակի արագությամբ անհետանում են
բոլոր աշխատավորները և նրանց տեղերը բռնում են կրկին
զինվորները՝ զինված իրենց ուժեղ ծնոտներով: Յեթե
հակառակ զինվորների անձնուրաց պաշտպանության՝ թշնամին
այնուամենայնիվ բունը քանդում ե, այն ժամանակ նրանց
մնում ե միայն մի քան, այն ե՝ ամեն կերպ աշխատել պաշ-
պանել մորը և հորը: Նրանք գտնվում են, ինչպես զիտենք,
ներքեի հարկի մեջտեղում գտնվող սենյակում և այդտե-
ղից դուրս գալու վոչ մի հնարավորություն չունեն: Ահա
աշխատավորները աշխատում են քանդել նրա կողըին զը-


տընվող բոլոր սենյակները և հողը թափել այն սենյակի վրա, քանդում, վոչնչացնում են և դեպի այդ սենյակը տանող բոլոր ճանապարհներն ու անցքերը։ Դրանով նրանք իրենց համար թափագին այդ արարածների հետքն սկսում են ծածկել և թափցնել։ Յեվ իրոք. նրանց ընի կազմությունն ու կյանքն ուսումնասիրող շատ գիտնականներ քանդելով բունը՝ շատ անդամ չեն կարողացել գտնել այդ զույգը, վորովհետեւ հասնելով այդ սենյակին՝ տեսնում են այդտեղ միայն փրկած հող, վորը ընավ կառուցվածքի տպավորություն չի թողնում, դրա համար կարծում են, թե հասել են արդեն ընի հիմքին, այսինքն այն մասերին, վարտեղ այլևս սենյակներ չկան, և դադարեցնում են աշխատանքները։

Բացի հողաշեն բներ ունեցող տերմիտներից, կան և
այնպիսիները, վորոնք բուն են շինում ծառերի բնի մեջ։ Ալ-
լանց բունը նույնպես բաղկացած ե բազմաթիվ սենյակնե-
րից, վորոնք բոլորն ել միացած են միմյանց հետ անցքե-
րով։ և սենյակներից ամենամեծն ու ամենալավը հատկա-
ցված ե մորը և հորը։ Այդտեղ ևս բոլոր աշխատանքները կա-
տարում են աշխատավորները, իսկ բնի պաշտպանությունը
հանձնված ե զինվորներին։ Այդ տերմիտները ևս շինում են
ստորերկրյա անցքեր դեպի զանազան կողմեր և առաջին
տեսակի տերմիտների նման աշխատում են լույսի յերես շը-
տեսնել։ Յեզ ինչ կարիք ունեն լույսի, քանի վոր կույր լի-
նելով՝ նրանից ոգտվել չեն կարող, բայց անվերջ կարող են
վտանգների յենթարկվել, մանավանդ վոր թշնամիներն ան-
թիվ, անհամար են։



ՑԱՆԿ

	<i>Ցերեա</i>
1. Դիաթաղները.	3
2. Դերձակները	11
3. Զեռղները	17
4. Զուլհակները	24
5. Ծեփողները.	35
6. Վորմնադիրները	44
7. Հյուսները	52
8. Հազարփեշակը	60
9. Կույր ճարտարապետները	71



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0010522

A 16159

ՄԱՆԿԱԿԱՆ ՍԵՐԻԱ

1. Հովհ. Թումանյան—Գիրոբը	40	լ.
2. Ի. Տուրգենև—Մոմու	20	լ.
3. Ռ. Գաբրիելյան—Հերոօր	20	լ.
4. Նիկ. Սարգսյան—Արմեստավորները	60	լ.

ԳԻՆԻ 60 ԿՈՊԵԿ

[604]